# Ազգ
Azg

14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 230(4610)

ISSN: 1829-1651


## «Հայերին բնաջնջել են քրդերի ձեռքերով»

Այդ մասին հայտարարել է Դիարբեքիրի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահի **Գալիփ Էնսարիօղլուն**: Նա օրերս, ինչպես դեկտեմբերի 6-ի համարում նշում է «Սաբահ» թերթը, մասնակցելով Ստամբուլում քրդական հարցին նվիրված սեմինարին, ասել է. «Մենք իբրեւ հասարակություն մասամբ կրում ենք մեր մեղքերի պատիժը: Մենք՝ քրդերս, հայերի եւ ոչ մահմեդականների դեմ կատարվածը սոսկ չենք դիտել հանդիսատեսի աչքով, այլեւ դարձել ենք իթթիհադականների գործիքն այն օրից, երբ այս վարչակարգը ծրագրեց ստեղծել ազգային պետություն: Այդ տարիներին այս հողերի բնակչության 25 տոկոսը ոչ մահմեդականներ էին: Հայերին մեր ձեռքերով են բնաջնջել»:

Այնուհետեւ նա շարունակել է. «Ներկայումս քրդական հարցը Թուրքիայի կարեւորագույն խնդիրն է, լուծումը՝ անխուսափելի: Չլուծելու դեպքում մեր գլխին բազում փորձանքներ ենք բերելու: Դա արդեն ոչ թե քրդերի, այլ խնդիրն է բոլոր նրանց, ովքեր Թուրքիայում են բնակվում»:

Հ. Չ.

## Հայաստան գազ մատակարարող վրացական գազատարը՝ ադրբեջանական դառնալու հեռանկարով

Վրաստանը դեռեւս չի կողմնորոշվել մայրուղային գազատարի վաճառքի հարցում: Ու չնայած Ադրբեջանի պետական նավթագազային ընկերությունը հետաքրքրություն է արտահայտել «Հյուսիս-հարավ» մայրուղային գազատարի վրացական հատվածը ձեռք բերելու առնչությամբ, վրացական կառավարությունը տեղեկացնում է, թե դեռ ոչինչ որոշված չէ:

Ըստ վրացական լրատվամիջոցների, վրաց փոխարտգործնախարար **Նինո Քալանդաձեն** հայտարարել է, թե կառավարությունը դեռեւս չի ձեւավորել իր դիրքորոշումը գազամուղի վաճառքի հարցում:

Միեւնույն ժամանակ, վրացի փոխարտգործնախարարը նշել է, թե Ադրբեջանի պետական նավթագազային ընկերությունը Վրաստանում բավականին մեծ եւ հաջողված նախագծեր է իրականացրել: «Մայրուղային գազատարի առնչությամբ որոշումը կարող է ընդունվել՝ ելնելով երկու երկրների շահերից», ասել է Քալանդաձեն:

Նշենք, որ հիշյալ գազատարի գնման կապակցությամբ հետաքրքրություն էր արտահայտել ադրբեջանական ընկերության նախագահ **Ռովնագ Աբդուլաեւը**, հայտարարելով, թե այդ գազատարը կարող է օգտագործվել ադրբեջանական գազը Վրաստանի տարածքով եւ Սեւ ծովով Ռումինիա հասցնելու ծրագրի իրականացման համար: Մինչդեռ չպետք է մոռանալ, որ առավելապես ադրբեջանական հանրույթի՝ վրացական գազատարի ձեռքբերման առնչությամբ արված հայտարարությունները վերաբերում են ոչ թե կոնկրետ ծրագրերի, այլ Հայաստանի վրա ճնշման նման լծակ ունենալու տարբերակին:

Եթե ելնենք Քալանդաձեի խոսքերից, ապա հավանականությունը մեծ է, որ այդ գազատարը կարող է ձեռք բերել հենց ադրբեջանական ընկերությունը: Մյուս կողմից, սակայն, հաշվի առնելով վրաց-ադրբեջանական համադաշնություն ստեղծելու առնչությամբ նույն Քալանդաձեին իր վերադասի կողմից հիմար վիճակի մեջ դնելու պրակտիկան, գուցե թե այս դեպքում էլ նրա խոսքերը իրականության հետ առանձնակի կապ չունեն:

Ա. Հ.

## ԱՄՆ-ի 9-րդ շրջանի դատարանի վճիռը՝ ի նպաստ Ցեղասպանության զոհերի ժառանգների

**ԱՄՆ-ի 9-րդ շրջանի վերաքննիչ դատարանը իր վճռով հաստատել է Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների՝ իրենց նախնիների ապահովագրական պոլիսներով ընկերություններից փոխհատուցում ստանալու իրավունքը, այսինքն՝ չեղյալ է համարել ավելի վաղ այդ իրավունքը չընդունող իր իսկ վճիռը: Վճիռը կայացվել է անցած ուրբաթ Սան Ֆրանցիսկոյում: Փաստորեն, ըստ նոր վճռի, հայերի հետ պատահածը ցեղասպանություն անվանող Կալիֆոռնիայի օրենքը չի հակասում ԱՄՆ քաղաքականությանը, իսկ ահա անցած տարի դատարանը նույն կազմով վճռել էր, թե Կալիֆոռնիայի այդ օրենքը հակասում է ԱՄՆ արտաքին քաղաքականությանը: Վերաքննիչ դատական ատյանի վերջին որոշումը Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին թույլ կտա շարունակել պահանջ ներկայացնել գերմանական ապահովագրական ընկերություններին, մասնավորապես՝ Munich Re AG ընկերությունից իրենց հարազատներին վաճառված ապահովագրական պոլիսների դիմաց փոխհատուցում ստանալ: Ցեղասպանության զոհերի ժառանգների շահերը ներկայացնող Բրայան Քաբաթեքը, Մարկ Կիրակոսը եւ այլ փաստաբաններ, որոնք ավելի վաղ պաշտպանել են ժառանգների շահերը New York Life եւ ֆրանսիական AXA ապահովագրական ընկերությունների դեմ հայցերում, այս վճիռը հերթական հաջողությունը համարեցին Ցեղասպանության զոհերի ժառանգների փոխհատուցման գործընթացում, որի քաղաքական տողատակը եւս անտեսել չի կարելի:**

**Մ. Խ.**

## Ո՞վ է ուզում դառնալ քաղաքապետ



**Երեկ կայացած նիստում, որը վարել է Երեւանի քաղաքապետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, Երեւանի ավագանին որոշել է քաղաքապետի արտահերթ ընտրությունները անցկացնել դեկտեմբերի 17-ին: Գագիկ Բեգլարյանը հրաժարական էր տվել դեկտեմբերի 8-ին, մեկ ամսվա մեջ՝ մինչեւ հունվարի 8-ը, օրենսդրությամբ այդ ընտրությունները պետք է տեղի ունենան: Այժմ արդեն ավագանու խմբակցությունները պետք է քաղաքապետի թեկնածու առաջադրեն: Սակայն հավանաբար միայն ՀՀԿ-ն թեկնածու կառաջադրի: Պաշտոնապես ՀՀԿ-ն դեռ առաջադրելու իր մտադրությունը թեկնածուների անունով չի բարձրաձայնել:**

**Ոչ պաշտոնապես շրջանառվում են Տարոն Մարգարյանի, քաղաքային ավագանիում ՀՀԿ խմբակցության ղեկավար Դերենիկ Դումանյանի եւ «Հայռուսգազարդի» գլխավոր տնօրեն Կարեն Կարապետյանի անունները:**

*Տես էջ 2*

## Հերման Գոլցը կնքեց մահկանացուն

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Դեկտեմբերի 9-ին Հալլեում (Գերմանիա) երկարատեւ ծանր հիվանդությունից հետո 64 տարեկանում մահկանացուն կնքեց գերմանացի աստվածաբան, ուղղափառ եկեղեցիների մասնագետ, հայագետ, դոկտոր, պրոֆեսոր Հերման Գոլցը:

Տասնամյակներ շարունակ նա ի թիվս ուրիշների զբաղվել է Գերմանիայում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման աշխատանքով, ինչի վկայությունն են ոչ միայն տպագիր աշխատությունները, այլեւ նրա խորհրդատվությամբ ստեղծված Էրիկ Ֆրիդլերի «Աղետ. մի ցեղասպանություն» ֆիլմը, որը հոկտեմբերին ստացավ Գերմանական հեռուստատեսության 2010-ի մրցանակը՝ լավագույն վավերագրություն անվանակարգում:



1946-ին ծնված Գոլցը 1964-69-ին Հալլե Վիթթենբերգի Մարտին Լյութեր համալսարանում աստվածաբանություն է ուսուցանում:

*Տես էջ 4*

## Ների՛ր, Էրդողան, WikiLeaks-ի համար

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի վարչապետ Էրդողանի հետ դեկտեմբերի 12-ին: Ըստ ԱՄՆ պաշտոնական հաղորդագրության, Միացյալ Նահանգների նախագահն իր ափսոսանքն է հայտնել WikiLeaks-ի հրապարակումների առնչությամբ, նշելով, թե դրանք չպետք է շեղեն երկու երկրներին իրենց համագործակցությունից:**

**Ըստ նույն աղբյուրի, երկու երկրների ղեկավարները նշել են, թե շարունակելու են աշխատել օրակարգային հարցերով, եւ որ գաղտնազերծված հրապարակումները չեն ազդել երկու երկրների հարաբերությունների եւ համագործակցության վրա:**

**WikiLeaks-ի հրապարակումների «անհետեւանք» լինելու մասին է փորձել հավաստիացնել նաեւ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն՝ «Աքշամ» պարբերականին տված հարցազրույցում՝ Թուրքմենստան այցելությունից վերադառնալուն պես: Դավութօղլուն հարաբերությունների չխաթարման մասին խոսել է Թուրքիա-Ադրբեջան կտրվածքով՝ այն դեպքում, երբ թուրքական մամուլը բոլոր տարբերակներով անդրադարձել է Ալիեւ կրտսերի հակաթուրքական գնահատականներին:**

## Ահմադինեժադը պաշտոնից ազատել է արտգործնախարարին

**Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնից ազատել է արտաքին գործերի նախարար Մանուչեհր Մոթաքիին: Այս մասին հաղորդում է իրանական «Իռնա» գործակալությունը՝ հղում անելով երկրի նախագահի պաշտոնական կայքէջին: Մեկ այլ տեղեկատվության համաձայն, արտգործնախարարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել իրանական ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհին: Մանուչեհր Մոթաքին Իրանի ԱԳ նախարարի պաշտոնը զբաղեցնում էր 2005-ից: Ահմադինեժադը արդեն նախկին արտգործնախարար Մոթաքիին հղած նամակում հաջողություն է մաղթել, արդյունավետ գնահատել աշխատանքը եւ վստահեցրել, որ ինքն անձամբ կաղոթի նրա համար:**

## Հնգակողմ հայտարարության հրապարակումից մի քանի ժամ անց Ադրբեջանը մերժում էր Աստանայի հռչակագրում նշել այդ մասին

### *«Ազգի» հարցազրույցը ԵԱՀԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ **Աշոտ Հովակիմյանի** հետ*

**- Պրն Հովակիմյան, որպես Աստանայի գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքների ակտիվ մասնակից՝ ինչպե՞ս կբնութագրեք իրավիճակը՝ գագաթաժողովի հռչակագրի ընդունման առումով:**

- Նոր ենք եկել Աստանայից, աշխատանքը ծանր էր այն առումով, որ չգիտեինք՝ ինչ արդյունք է լինելու: Մեր առաքելության համար Աստանան, առաջին հերթին, այն փաստաթուղթն էր, որ պիտի ընդունվեր գագաթաժողովում: Կար փաստաթղթերի մի շարք, որոնցից ի վերջո մնաց միայն ընդհանուր հռչակագիրը: Գագաթաժողովը չէր անցկացվել տասնմեկ տարի, իսկ նախորդ տարիների նախարարական հանդիպումներում ընդհանուր որոշման գալու բոլոր փորձերը չէին հաջողվում: Արդեն այն, որ Աստանայում ընդունվեց կոնսենսուսային փաստաթուղթ՝ նույնիսկ ընդհանուր ձեւակերպումներով, կարելի է համարել ոչ միայն գագաթաժողովի արդյունք, այլեւ հաջողություն: Երկրորդ փաստաթուղթը գործողությունների ծրագիրն էր, որ չընդունվեց: Պետք է լինել իրատես, որ այնքան հակասություններ կան այս կազմակերպության անդամ երկրների միջեւ, հիմնականում՝ հակամարտությունների, մարդու իրավունքների խնդիրներով, որ մեկ ընդհանուր ծրագրի գալը ծանրագույն գործ է: Ամբիցիաներ կային, թե կարելի է ընդունել գործողությունների ծրագիրը, սակայն իրականությունն այլ էր: Ամեն դեպքում, հակամարտությունների կարգավորման կտրվածքով հռչակագիրը կարելի է գնահատել որպես մի քայլ, որ հաստատում է այն սկզբունքները, որոնք Հայաստանը պնդում էր. մնում ենք խաղաղ կարգավորման ջատագովներ, որ ԵԱՀԿ-ն պետք է զսպի նրանց, ովքեր այլ պատկերացումներ ունեն, եւ համապատասխան լեզու գտնվեց, որ այդ պատգամը տրվի ողջ միջազգային հանրությանը: Գագաթաժողովի այս արդյունքը չի կարելի թերագնահատել: Հռչակագրում հատուկ ուշադրություն դարձվեց նաեւ հակամարտությունների կարգավորման ձեւաչափերին, շեշտադրմամբ, որ դրանք պետք է պահպանվեն:



*Տես էջ 4*

ԱԶԳ **Ընթացիկ**

# 2011 թվականին ՀԱՊԿ արագ արձագանքման ստորաբաժանումների զորավարժությունները կանցկացվեն Հայաստանում

Ազգային անվտանգության խորհրդի՝ դեկտեմբերի 11-ին կայացած հերթական նիստում քննարկվել եւ հավանության է արժանացել «ՀՀ սպառազինության եւ ռազմական տեխնիկայի 2011-2015 թվականների զարգացման պետական ծրագիրը»:

Դեկտեմբերի 13-ին հրավիրված ասուլիսում Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար **Արթուր Բաղդասարյանը** տեղեկացրել է, որ ծրագիրը գործողության մեջ կդրվի հանրապետության նախագահի հրամանագրով. «Այս ծրագրի հաստատմամբ մենք կարեւոր քայլ ենք ձեռնարկում՝ չեզոքացնելու Հայաստանի անվտանգությանն առնչվող հնարավոր բոլոր ռազմական սպառնալիքները: Փաստաթղթի ընդունմամբ մեր երկրում ներդրվում է սպառազինությունների եւ ռազմական տեխնիկայի միջնաժամկետ եւ երկարաժամկետ զարգացման հստակ տեսլական. ծրագրի շրջանակում անհրաժեշտության դեպքում կարդիականացվեն առկա սպառազինություններն ու ռազմական տեխնիկան, ինչն էական նշանակություն ունի մեր զինված ուժերի մարտունակությունն ավելի բարձրացնելու առումով: Ծրագրի հաստատմամբ Հայաստանում նաեւ զարկ կտրվի ռազմական արդյունաբերության զարգացմանը: Երեւանում ստորագրված «Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցության մասին» պայմանագրի հիման վրա կստեղծվեն համատեղ ձեռնարկություններ, ինչը հնարավորություն կտա մի կողմից՝ զարգացնել Հայաստանի ռազմարդյունաբերությունը, մյուս կողմից՝ խթանել մեր երկրում նոր աշխատատեղերի ստեղծումը եւ ռազմական ոլորտում համագործակցության խորացումը Ռուսաստանի եւ ՀԱՊԿ անդամ մյուս երկրների հետ»:

Այս համատեքստում Արթուր Բաղդասարյանը կարեւորել է ՌԴ նախագահի՝ Հայաստան այցի ընթացքում ստորագրված արձանագրությունը, համաձայն որի երկարաձգվում է Հայաստանում ռուսական ռազմաբազաների տեղակայման ժամկետը: Կողմերն արդեն ձեռնամուխ են եղել արձանագրության կետերի իրականացմանը: Արթուր Բաղդասարյանը դեկտեմբերի 10-ին Մոսկվայում հանդիպել է ՌԴ սահմանապահ զորքերի հրամանատար, բանակի գեներալ Վլադիմիր Պրոնիչեւի հետ, քննարկել Հայաստան-Իրան, Հայաստան-Թուրքիա սահմանային անցակետերի ենթակառուցվածքների հետագա արդիականացմանը, սահմանային անվտանգությանն առնչվող հարցերի լայն շրջանակ: Արդեն ձեւավորվել է համատեղ աշխատանքային խումբ Հայաստանի եւ Ռուսաստանի սահմանապահների մասնակցությամբ, մշակվել է համապատասխան ծրագիր, որի իրականացումը լուծում կտա առկա խնդիրներին:



Անդրադառնալով Մոսկվայում դեկտեմբերի 10-ին կայացած ՀԱՊԿ անդամ երկրների գագաթաժողովում քննարկված հարցերին՝ Արթուր Բաղդասարյանը տեղեկացրել է, որ հայկական կողմը կարողացել է լավագույնս ներկայացնել իր մոտեցումները թե՛ հանրապետության նախագահի հստակ ելույթով, թե՛ անվտանգության խորհրդի քարտուղարների, պաշտպանության եւ արտաքին գործերի նախարարների համատեղ քննարկումների ընթացքում:

ՀԱՊԿ անդամ երկրների նախագահներն առանձնահատուկ կարեւորել են այս տարի առաջին անգամ Հայաստանում կայացած ՀԱՊԿ անդամ երկրների ոչ պաշտոնական գագաթաժողովի արդյունքները. «Գագաթաժողովի ընթացքում ընդունվել էին մի շարք կարեւորագույն որոշումներ, հանձնարարվել էր մշակել նորմատիվ իրավական փաստաթղթերի փաթեթ: Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում մենք կարողացանք ավարտել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակումը, եւ Մոսկվայում վավերացվեց 35 փաստաթուղթ, որոնք կարեւոր նշանակություն ունեն մեր երկրի համար: ՀԱՊԿ կանոնադրության մեջ կատարվեցին համապատասխան փոփոխություններ, ինչը հնարավորություն կտա հեշտացնել ՀԱՊԿ անդամ երկրների շրջանակում սպառազինությունների եւ ռազմական տեխնիկայի ձեռքբերումն արտոնյալ պայմաններով: ՀԱՊԿ կանոնադրությամբ արձանագրվեց, որ ՀԱՊԿ անդամ որեւէ երկրի դեմ ռազմական սպառնալիքի կամ ագրեսիայի դեպքում ՀԱՊԿ անդամ երկրները պետք է անհրաժեշտ աջակցություն ցուցաբերեն տվյալ երկրին: Մենք կարողացանք կարեւոր առաջընթաց ունենալ այս համատեքստում սահմանափակ ձեւաչափով որոշումներ ընդունելու առումով. հստակեցվեց որոշումների ընդունման, արագ արձագանքման ստորաբաժանումների օգտագործման կարգը եւ բազմաթիվ այլ հարցեր»:

Քանի որ Հայաստանը ՀԱՊԿ արագ արձագանքման ստորաբաժանումների ձեւավորման նախաձեռնողներից ու ակտիվ մասնակիցներից մեկն է, գագաթաժողովի ընթացքում որոշում է կայացվել 2011 թվականի հոկտեմբերին այդ ստորաբաժանումների զորավարժությունները անցկացնել Հայաստանում: Շուրջ 20 հազարանոց զորախմբում ներգրավված են ՀԱՊԿ անդամ երկրների զինված ուժերի, ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումները: Կմշակվի ՀԱՊԿ շրջանակում այդ ստորաբաժանումներն անհրաժեշտ սպառազինություններով եւ հանդերձանքով ապահովելու հատուկ միջպետական նպատակային ծրագիր:

*Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ*

# Ո՞վ է ուզում դառնալ քաղաքապետ

*1-ին էջից*

Առաջինը բավական երիտասարդ է, եւ չնայած իր հաշվին գրանցել է Ավան համայնքը ղեկավարելու ընթացքում մնացած Ավանի բնակիչների լավ հիշողությունն ու հասարակ մարդկանց համակրանքը (որը մասամբ իր հորից՝ Անդրանիկ Մարգարյանի բարոյական կապիտալից ստացված ժառանգություն էր), սակայն դեռեւս չի կարելի ասել, թե լավագույն փորձն ունի քաղաքը կառավարելու առումով:

Երկրորդը մասնագիտությամբ բժիշկ է, ավելի վաղ առողջապահության փոխնախարար էր, էլի քաղաքը կառավարելու ուղիղ փորձ չունի: Երրորդը ղեկավարում է Ռուսաստանում ամենահարուստ ընկերություններից մեկը եւ անհասկանալի է, թե ինչու նա պետք է ցանկանա Երեւանի քաղաքապետ դառնալ. առայժմ հայտնի չէ՝ ինչպե՞ս է նա արձագանքում իր անվան շրջանառությանը Երեւանի քաղաքապետի թեկնածուների շարքում:

Հնարավոր է՝ այս անունները նաեւ ապակողմնորոշող կամ որոշ մարդկանց առաջադրվելու ախորժակը փակելու նշանակությունն ունեն: Կամ գուցե՝ առաջին հայացքից կարող է թվալ, թե ամենահարմար թեկնածուն Տարոն Մարգարյանն է: Մի դիտարկում, այնուամենայնիվ, անենք. Երեւանի քաղաքապետի պաշտոնը շատ ազդեցիկ պաշտոն է, մանավանդ եթե նկատի ունենանք մոտեցող խորհրդարանական ընտրությունների եւ մայրաքաղաքային ակտիվ ընտրազանգվածի հանգամանքը՝ ՀՀԿ-ի համար այս պաշտոնում ուժեղ վարչական եւ միաժամանակ քաղաքական ֆիգուր ունենալու անհրաժեշտությունը կարծես աներկբա է:

Մյուս կողմից՝ մայրաքաղաքը նաեւ հենց հանրապետությունն է, կարելի է ասել, շատ բաներում առաջատար եւ առաջամարտիկ: Եթե նկատի ունենանք սահմանադրությամբ Հայաստանի նախագահի պաշտոնից հետո ԱԺ նախագահի, վարչապետի պաշտոնների ազդեցիկության շրջանակը, ապա քաղաքապետի պաշտոնն ազդեցությամբ երեւի կարելի է չորրորդը համարել: Սակայն ընդամենը հիշենք Տեր-Պետրոսյանի ժամանակը, երբ Վանո Սիրադեղյանն էր քաղաքապետ՝ լծակների առումով նա դարձել էր երկրորդ մարդը երկրում եւ լուրջ վտանգ էր ներկայացնում նախագահի աթոռին:

Այնպես որ՝ նախագահ Սարգսյանը ում էլ առաջարկի այս պաշտոնին՝ ամրապնդում է նախ իր թիկունքը, գուցե նաեւ՝ առաջիկայում իր շտաբի պետին է ուզում ունենալ նախագահական ընտրություններին: Այդպիսով՝ քաղաքապետի թեկնածուի առաջադրումը միայն առաջին հայացքից է քաղաքապետի թեկնածուի առաջադրում, իրականում այդ ֆիգուրի համար նախագահ Սարգսյանը որոնում է հավատարիմ, ճկուն, լավ վարչարար, եւ ինչու չէ՝ քաղաքական գործիչ թեկնածու:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ԱՍՈՒԼԻՍ

# Ադրբեջանահայերը նամակ են ուղարկել Պան Կի Մունին

**Ժամանակին Ադրբեջանից գաղթած հույն համայնքի նախաձեռնությամբ ստեղծվել է Ադրբեջանից կրոնական, քաղաքական, ազգային, փախստական խմբերի լիազոր ներկայացուցիչների համակարգող խորհուրդ, որին անդամակցել են նաեւ Հայաստանի ադրբեջանահայերը: Նրանց հիմնական նպատակն է աշխարհին ներկայացնել Ադրբեջանում ապրող եւ ապրած ազգային փոքրամասնությունների խնդիրն ու ապացուցել, որ այդ երկիրը այնքան էլ քաղաքակիրթ չէ ինչպես ներկայանում է, եւ ազգային փոքրամասնությունների հետ երկխոսելու խնդիր ունի: Դեկտեմբերի 9-ին Ադրբեջանի ազգային փոքրամասնությունները նամակով դիմել են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Կի Մունին՝ կոչ անելով ուշադրություն դարձնել Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների խնդրին:**

**«1988-1994 թթ. Բաքվի կառավարության հրահրած պատերազմի, ցեղասպանության եւ ոստիկանական ճնշումների զոհերի նկատմամբ անհավասար վերաբերմունք, որն արտահայտվում է բացառապես մեկ մասի, մեկ հատվածի իրավունքների խախտման ամրագրմամբ», նամակի բովանդակությունն է ներկայացնում Ադրբեջանահայության կազմկիցի անդամ Մարիամ Ավագյանը: Ազգագրագետ Հրանուշ Խառատյանը փաստում է՝ ադրբեջանահայերը փախստական դարձան հենց ազգային փոքրամասնության պատկանելու եւ Ադրբեջանում հայերի նկատմամբ դրսեւորած ֆաշիստական վերաբերմունքի հետեւանքով:**

**«Նրանց գործողության հիմքում ոչ թե հայասպանությունն էր, այլ հայերին ոչնչացնելու ցանկությունը»: Խառատյանը պատմում է 1990-ին Բաքվի հունվարյան ջարդերի ժամանակ փախստական դարձան նաեւ այլ ազգերի ներկայացուցիչների մասին: Ազգային փոքրամասնությունների հանդեպ հալածանքներ պաշտոնական Բաքուն իրականացնում է նաեւ այսօր, սակայն դրան որեւէ մեկը չի արձագանքում: «ԵԱՀԿ-ն ստեղծել է ազգային փոքրամասնությունների գծով գերագույն գլխավոր կոմիսար, որի նպատակն է հենց այսպիսի իրավիճակներին միջամտելը: Մինչդեռ այդ կոմիսարն երբեւէ քննարկման չի դրել ազգային փոքրամասնությունների հարցը, որոնք ամենախայտառակ կերպով ամեն օր խախտվում են», ասաց ազգագրագետը: Տկն Խառատյանը քննադատում է նաեւ ՄԱԿ-ի գործողությունները՝ ընդգծելով, որ այդ կառույցը երբեւէ չի քննարկել Ադրբեջանում փոքրամասնությունների խնդիրը, վերլուծություն չի իրականացրել: «ՄԱԿ-ը պետք է հավասարակշռություն ապահովի եւ սեւեռուն ուշադրություն դարձնի փախստականների խնդրին»: ՄԱԿ-ը տարին մեկ անգամ անդրադառնում է անհետացող լեզուներին, ժողովուրդներին, բայց երբեւէ չի քննարկվում Ադրբեջանում անհետացող ժողովուրդների հարցը: «Իսկ նրանք բազմաթիվ են՝ հայեր, լեզգիներ, թաթարներ», եզրափակեց Խառատյանը՝ հավելելով, որ չի բացառվում, որ ասուլիսից հետո պաշտոնական Բաքուն հերթական ապատեղեկատվությունը կտարածի ու ի լուր աշխարհի կհայտարարի, թե Բաքուն ոչ միայն ադրբեջանցիների, այլեւ ազգային փոքրամասնությունների երազանքների քաղաքն է: Հ. Հ.**

# ՌԴ նախագահի շքանշանը՝ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենին



**Դեկտեմբերի 13-ին Ռուսաստանի դեսպանատանը ՌԴ նախագահի հրամանագրով «Բարեկամության» շքանշան հանձնվեց ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն, գեներալ-մայոր Սերգեյ Ազարյանին:**

**2010 թ. օգոստոսի 5-ից 15 օր շարունակ 28 հայ հրշեջ-փրկարարներ օրուգիշեր աշխատեցին Ռուսաստանում՝ պայքարելով անտառային հրդեհների դեմ: Փրկվեցին անտառատարածքներ եւ ամբողջական գյուղեր: Հայ հրշեջ-փրկարարները հայրենիք վերադարձան մեդալներով ու շնորհակալագրերով, իսկ Հայաստան կատարած այցի ժամանակ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հատուկ շնորհակալություն հայտնեց հայ հրշեջ-փրկարարներին՝ փորձության պահին իրենց երկրին օգնելու համար:**

**Հոկտեմբերի 13-ին Մոսկվայում՝ Կրեմլի Եկատերինյան դահլիճում անձամբ Դմիտրի Մեդվեդեւից «Արիության համար» շքանշան ստացավ հայ հրշեջ-փրկարարների խմբի ղեկավար, փ/ծ գնդապետ Պավել Գյոզալյանը: Ս. Ս.**

# «Բարգավաճը» խորհրդարան է ուղարկում Արագած Ախոյանին

**ԲՀԿ-ից Սահմանադրական դատարանի անդամ նշանակված Արեւիկ Պետրոսյանի փոխարեն այս կուսակցությունում որոշել են խորհրդարան ուղարկել ԲՀԿ քաղխորհրդի անդամ՝ «Հայկարշին» ՍՊԸ-ի նախագահ Արագած Ախոյանին: Նրանից առաջ ԲՀԿ ցուցակում եղող դերասան Գուժ Մանուկյանը, գործարար Հայրապետ Հայրապետյանն ու Վայոց ձորի մարզպետ Սերգեյ Բագրատյանը իրենց դիմումներով հրաժարվել են պատգամավորական մանդատից:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հայաստանյան ԶԼՄ-ները մասամբ ազատ ու ոչ ազատ լրատվամիջոցների եզրագծում են

Հայաստանում ԶԼՄ-ների ազատության մակարդակը պարզելու նպատակով Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն իրականացրել է փորձագիտական, սոցիոլոգիական հետազոտություն: Այս մասին երեկ «Հենարան» ակումբում լրագրողներին տեղեկացրեց նույն կոմիտեի նախագահ **Աշոտ Մելիքյանը**. «Հարցումն անցկացվել է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, իսկ տվյալներն ամփոփվել են հոկտեմբերին»: Սոցիոլոգ Վարդան Գեւորգյանի փոխանցմամբ՝ որպես փորձագետներ ընտրվել են Հայաստանի 50 առավել հայտնի ԶԼՄ-ների աշխատակիցներն ու ղեկավարները: Ընտրված փորձագետները ներկայացրել են 6 տարբեր խմբեր՝ տպագիր լրատվամիջոցներ, հեռուստաընկերություններ, լրատվական գործակալություններ, ինտերնետային հրատարակություններ եւ այլն: Աշոտ Մելիքյանի խոսքով՝ դեռ 2002 թվականից միջազգային իրավապաշտպան եւ լրագրողական կազմակերպությունների գնահատմամբ՝ հայաստանյան լրատվամիջոցները համարվում են ոչ ազատ: Միջազգային այդ կազմակերպություններից է օրինակ՝ «Freedom house»-ը, որի վերջին տվյալների համաձայն՝ Հայաստանը 66 միավորով համարվել է ոչ ազատ լրատվամիջոցներ ունեցող երկիր: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կատարած հարցման ու վերլուծության հիմքում ընկած է «Freedom house»-ի մեթոդիկան: «Որոշեցինք այդ մեթոդիկան հարմարեցնել տեղի պայմաններին եւ անցկացնել մեր հետազոտությունը, ըստ որի՝ հայաստանյան լրատվամիջոցները մասամբ ազատների ու ոչ ազատների եզրագծում են գտնվում», ասաց Աշոտ Մելիքյանը:

Կատարված հետազոտությունը մի մասն է այն ծրագրի, որն իրականացվում է Բաց հասարակության ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ: Հետազոտության մեթոդիկայի համաձայն՝ ԶԼՄ-ների ազատության մակարդակը գնահատվել է իրավական, քաղաքական ու տնտեսական միջավայրերին վերաբերող հարցերի միջոցով: Փորձագետների ընդամենը 6 տոկոսն է ազատ գնահատել հայաստանյան լրատվամիջոցները, 46 տոկոսը գնահատել է մասամբ ազատ, իսկ 48 տոկոսը՝ ոչ ազատ: Սոցիոլոգի փոխանցմամբ՝ իրավական առումով մեր լրատվամիջոցներում ազատ վիճակ է միայն կիսով չափ. «Քաղաքական առումով նույնպես գնահատվել է մասամբ ազատ վիճակ, իսկ տնտեսական առումով՝ ոչ ազատ»: Մեր լրատվամիջոցներն ազատ չեն տնտեսապես, իսկ իրավական դաշտի վերաբերյալ Ա. Մելիքյանը հավելեց հետեւյալը. «Երբ ասում ենք՝ լավ օրենսդրություն ունենք, դա ասում ենք վերապահումով: «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքը լուրջ փոփոխությունների կարիք ունի»: Ընդհանուր առմամբ, որ օրենսդրությունը պրակտիկայում ամենեւին էլ հաջող չի կիրառվում, փաստ է»: Ինչ վերաբերում է գրաքննությանը, Աշոտ Մելիքյանն ասում է, որ մեզանում թեեւ գրաքննությունը պաշտոնապես արգելված է, սակայն լրատվամիջոցների աշխատակիցները զգում են քողարկված գրաքննության ներկայությունը: Այնուհետեւ կրկին անդրադառնալով հետազոտության նպատակներին՝ Ա. Մելիքյանը նշեց, որ նպատակը եղել է իրավիճակի գնահատումը. «Իսկ կանխատեսումների առումով որեւէ նպատակ չենք ունեցել»: Այնուամենայնիվ, Աշոտ Մելիքյանի կարծիքով՝ առաջիկա տարիներին իրավիճակը կարող է վատանալ, քանի որ ընտրությունների ժամանակ միշտ արձանագրվում է լրագրողների ու լրատվամիջոցների հանդեպ բռնությունների ու ճնշումների աճ:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Անվարձահատույց դոնորների թվի նվազ ցուցանիշը մտահոգիչ է

Հայաստանում ընթացիկ տարվա 10 ամիսներին արյան դոնորների կազմում գերակշռել են վճարովի դոնորները: Հայաստանի արյունաբանական կենտրոնի արյան զարգացման ծրագրերի համակարգող Մելքոն Գարասեֆերյանը news.am-ին ասել է, որ անվարձահատույց դոնորների թվի նվազ ցուցանիշը մտահոգիչ է: Մ. Գարասեֆերյանի խոսքով՝ անվարձահատույց դոնորների թվի ավելացմանը հնարավոր է նպաստել դոնորային ակտիվ քարոզչության միջոցով: Նրա տվյալներով՝ 2010-ի 10 ամիսներին 8662 դոնորից հավաքվել է շուրջ 24000 միավոր արյան բաղադրամաս: Արյուն հանձնողների տարիքային կազմը 20-24 տարեկանն է, որի մեջ գերակշռողը կանայք են: Դոնորների մեջ մեծ թիվ են կազմում արյան 2-րդ խումբ ունեցողները: Մասնագետը նաեւ ասել է, որ երբեմն 3-րդ եւ 4-րդ խմբերի , հատկապես բացասական ռեզուս արյան բաղադրամասերի կարիք է զգացվում: Մ. Գարասեֆերյանի փոխանցմամբ՝ ներկայումս աշխատանքներ են կատարվում Արյունաբանական կենտրոնում բարձր դեղաչափային քիմիոթերապիայի եւ ոսկրածուծի փոխպատվաստման բաժանմունք ստեղծելու ուղղությամբ:

Ի. Պ.

# «Վիվասել-ՄՏՍ»-ը ստացել է ISO 9001:2008 սերտիֆիկատ

**Հաաստանի բջջային կապի օպերատոր «Վիվասել-ՄՏՍ»-ն հայտարարում է ISO 9001:2008 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան որակի կառավարման համակարգ ներդնելու մասին: Ընկերության տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ «Վիվասել-ՄՏՍ»-ն Հայաստանում հեռահաղորդակցության ոլորտում դարձել է այդ սերտիֆիկատը ստացած առաջին ընկերությունը: Որակի կառավարման համակարգի ներդրման նախագիծը մեկնարկել է 2009-ի նոյեմբերին: Այն «Վիվասել-ՄՏՍ»-ին շնորհվել է բջջային հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման եւ հաճախորդների սպասարկման ոլորտների համար:**

**2010-ի օգոստոսին ստուգման, վավերացման, թեստավորման եւ սերտիֆիկացման շվեյցարական «SGS Group» ընկերությունը (հիմնված 1878 թվականին) «Վիվասել-ՄՏՍ»-ում անցկացրել է ISO 9001:2008 սերտիֆիկացման աուդիտ, ինչի արդյունքներով 2010-ի նոյեմբերին ընկերությունը ստացել է սերտիֆիկատը:**

**Ա. Մ.**

# Գերշահավետ առաջարկ «Իդեալ»-ից. գերխնայող ջեռուցման համակարգեր՝ հատուկ պայմաններով

Հետեւելով շինարարական ապրանքների առեւտրի ժամանակակից սկզբունքներին, առաջնորդվելով «Մատչելի է եւ բարձրակարգ» կարգախոսով «Իդեալ համակարգը» ներկայանում է հերթական անակնկալով: Ապառիկի շահավետ պայմաններով ջեռուցման համակարգեր ձեռք բերելուն զուգահեռ՝ կազմակերպությունը նախատեսում է նաեւ հատուկ նվերներ:

«Այցելելով «Իդեալ համակարգի» որեւէ խանութ-սրահ եւ պատվիրելով հատուկ գնապիտակով ջեռուցման համակարգերի հատուկ փաթեթներ՝ սպառողը կստանա խոշոր նվերներ՝ 180.000 դրամ, անվճար չափագրում եւ տեղադրում», նոր առաջարկն է ներկայացնում «Իդեալ համակարգի» խանութների ցանցի տնօրեն **Սահակ Վարդանյանը**՝ հավելելով, որ կազմակերպության առաջնային նպատակն է առավել հարմարավետ դարձնել քաղաքացիների կենցաղը:

Սահակ Վարդանյանը նշում է, որ «Իդեալ համակարգի» խանութ-սրահներ այցելած հաճախորդները հաճելիորեն կզարմանան. սպառողները կօգտվեն ողջ տեսականու համար գործող զեղչերից:



Զեղչերին եւ անակնկալներին զուգահեռ՝ «Իդեալ համակարգի» խանութ սրահներում բացի որակյալ շինարարական ապրանքներ գնելուց՝ սպառողները կստանան փորձառու եւ արհեստավարժ անձնակազմի օգտակար խորհուրդներ՝ կապված ապրանքների ընտրության, խնայելու հնարավորության եւ ցանկալի ինտերյերի ձեւավորման վերաբերյալ:

Կազմակերպության անձնակազմը հոգացել է, որ սպառողները ժամանակի կորուստ չունենան: www.idealsystem.am ինտերնետային կայքի միջոցով կարելի է պատվիրել ջեռուցման համակարգերի անվճար չափագրում, որը սեղմ ժամկետներում կիրականացնեն հմուտ եւ փորձառու մասնագետները: Այնուհետեւ սպառողը կարող է ընտրել ջեռուցման համակարգերի ձեռքբերման նախընտրելի տարբերակը՝ սկսած ապառիկի բազմազան հնարավորություններից եւ գործող շահավետ ակցիաներից:

«Փաստորեն «Իդեալ համակարգը» սպառողներին առաջարկում է տնտեսել ոչ միայն դրամական միջոցները, այլ նաեւ խանութ-սրահ այցելելու թանկարժեք ժամանակը՝ ինտեգրվելով քաղաքակիրթ առեւտրի գործընթացներում», ասաց Սահակ Վարդանյանը՝ հավելելով, որ իրենք հավատարիմ են մնում խոստմանն ու շարունակելու են ներկայանալ նոր եւ որակյալ ապրանքատեսակներով ու ծառայություններով, բնակչությանը մատուցել նորանոր անակնկալներ՝ առաջարկելով տնական տրամադրություն ստեղծող խնայողության բանաձեւեր՝ վերանորոգումը դարձնելով տնի նախապատրաստում:

Հ. Հ.



# Գիտական նստաշրջան մանկավարժականում

**Մաթեւոսյանական տարվա շրջանակներում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի, հայ գրականության ամբիոնի եւ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի նախաձեռնությամբ համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնում անցկացվեց համալսարանի շրջանավարտ Հրանտ Մաթեւոսյանի 75-ամյակին նվիրված գիտական նստաշրջան, իսկ բանասիրական ֆակուլտետում մեկ լսարան կոչվեց Հրանտ Մաթեւոսյանի անունով: Արարողությանը մասնակցում էին համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Միրզախանյանը, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, «Նորք» ամսագրի գլխավոր խմբագիր Ֆելիքս Մելոյանը, Հրանտ Մաթեւոսյանի կինը՝ տիկին Վերժինեն, հարազատներ, դասախոսներ, ուսանողներ եւ հյուրեր:**



**«Հայրենի հողը Մաթեւոսյանը դիտարկում էր որպես սերունդների շարունակականության գաղափար, եւ նրա փիլիսոփայությունը բոլոր ժամանակների համար է», ասաց Ռ. Միրզախանյանը՝ փաստելով, որ ցանկացած համալսարանի վարկը պայմանավորված է ոչ թե լավագույն պայմանների ու հնարավորությունների առկայությամբ, այլ նրանով, թե ովքեր են շրջանավարտները եւ ովքեր են դասավանդում: Նա հրապարակեց համալսարանի գիտխորհրդի որոշումը, որով սահմանվել է Հրանտ Մաթեւոսյանի անվան կրթաթոշակ եւ որին արժանացել է բանասիրական ֆակուլտետի ուսանողուհի Սիրարփի Սուրենի Գեւորգյանը: ՀԳՄ նախագահ Լ. Անանյանը խոսեց մաթեւոսյանական ավանդների, ժողովրդական ճանաչման եւ ստեղծած դպրոցի մասին, որից սնունդ են առնում ոչ միայն հայրենիքում, այլեւ նրանից դուրս: Եվ հատկանշական է մաթեւոսյանական տարում մեծ գրողի վերադարձը հարազատ համալսարան:**

**Նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան պրոֆեսոր Ա. Դոլուխանյանը, դոցենտ Ռ. Դոլուխանյանը, դոցենտ Մ. Գիլավյանը եւ ասիստենտ Լ. Գալստյանը: Նրանք անդրադարձան գրողի տարբեր ստեղծագործություններին՝ ներկայացնելով մեր լինելության ընթացքի եւ մեր ապագայի գուշակման մաթեւոսյանական բանաձեւը:**

ՍԻԼՎԱ ԱՄՐՅԱՆ
ՀՊՄՀ մամուլի քարտուղար

# Առաջնախայլ նախաձեռնությունները նյութական վնասի չեն հանգեցնի

**ԼՂՀ հանրային ծառայությունները եւ տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը «Ղարաբաղ տելեկոմ» ընկերության ղեկավարության հետ քննարկել եւ համաձայնության է եկել վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների նոր սակագների հարցում: Շաբաթ օրը «Ղարաբաղ տելեկոմի» գործադիր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին նաեւ հիշյալ հանձնաժողովի անդամները, ներկայացրել է առաջիկա ծրագրերը:**

**Յիրիկյանի խոսքով, սակագների վերանայումն իրականացվելու է երկու փուլով: Առաջին փուլն արդեն մեկնարկել է, երկրորդ փուլը կսկսվի հուլիսի 1-ից: Ներկա փոփոխությունները վերաբերում են ձայնային ծառայությունների սակագներին: Մասնավորապես, եթե ֆիքսված քաղաքային ցանցից զանգը դեպի Հայաստանի ֆիքսված ցանց մեկ րոպեի հաշվարկով կազմում էր 36 դրամ, այժմ դարձել է 29.99 դրամ, իսկ բջջային ցանցից զանգը 75 դրամի փոխարեն դարձել է 45 դրամ: Ընդ որում, հուլիսի 1-ից այդ սակագները զգալիորեն ավելի ցածր կդառնան: Վերանայվել է նաեւ տեղական SMS-ների սակագինը՝ մեկ SMS-ը 20 դրամի փոխարեն դառնալով 15 դրամ:**

**«Ղարաբաղ տելեկոմի» տնօրենը նշեց, որ սակագների նվազմանը զուգընթաց՝ կարող է հեռախոսակապի օգտագործման աճ գրանցվել, ինչն իր հերթին պահանջելու է ցանցի արդիականացում: Քաղաքային ցանցն այդ առումով խնդիր չունի, բայց ահա բջջային ցանցի թողունակության հնարավորությունները սահմանափակ են: Այդ ուղղությամբ, տնօրենի հավաստմամբ, աշխատանքներ տարվում են:**

**Միջազգային զանգերի սակագները նվազեցվել են ավելի մեծ չափով: Օրինակ, եթե VoIP-ով դեպի Ռուսաստան սակագինը եղել է 80 դրամ, այժմ դարձել է 39.99 դրամ, իսկ ոչ VoIP-ով կապը 215 դրամից իջեցվել է մինչեւ 59.99 դրամ: Ընդհանուր առմամբ, Արցախից 20 ուղղություններով կատարվող զանգերը էժանացել են հիմնականում՝ 50, որոշ դեպքերում նույնիսկ մինչեւ 100 տոկոսով:**

**«Ղարաբաղ տելեկոմը» հունվար ամսից ներմուծելու է տարբեր փաթեթներ, եւ բաժանորդներն արդեն հնարավորություն կունենան ընտրելու ձայնային ծառայությունների իրենց համար մատչելի ձեւը: Ռալֆ Յիրիկյանը նաեւ տեղեկացրեց, որ մանրաթելային ենթակառուցվածքի ցանցի ստեղծման աշխատանքներն ավարտվելու վրա են, եւ հավանական է, որ շահագործման կհանձնվի փետրվարի վերջին: Դա թույլ կտա վերանայել ինտերնետ ծառայության սակագները, ներմուծել ինտերնետի նոր փաթեթներ:**

**Երրորդ սերնդի սարքավորումների գործարկումը նախատեսվում է 2011 թվականի ապրիլին: Ընդ որում, EDGE տեխնոլոգիաները կլինեն և՛ Ստեփանակերտում, և՛ ԼՂՀ շրջկենտրոններում: Լինելու է նաեւ շարժական ինտերնետ՝ EDGE տեխնոլոգիայով: Զուգահեռաբար, ընկերությունը կսկսի զարգացնել ֆիքսված լայնաշերտ ինտերնետը, որի սակագները եւս աստիճանաբար կվերանայվեն:**

**Լրագրողները հետաքրքրվել են, թե ինչու ինտերնետի սակագների վերանայումը թողնվել է փետրվարին: Ռ. Յիրիկյանը դա բացատրեց ավելի հզոր սարքավորումներ պատվիրելու հանգամանքով: Նա հույս հայտնեց, որ սակագների վերանայումն անպայման հեռախոսակապի օգտագործման աճ կբերի, եւ ընկերությունն այս նոր, առաջնախայլ նախաձեռնությունների արդյունքում նյութական վնաս չի կրի:**

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ԱԶԳ

# Միջազգային

## Ընդամենը պատրվակ

Մոսկվայում ապրող կովկասցիները շատ լավ գիտեն, որ տարվա մեջ առնվազն երկու օր, երբ հանդիպում են մոսկովյան ԲԿՄԱ-ն եւ «Սպարտակը», տնից դուրս գալը, մարդաշատ վայրերում՝ մանավանդ մարզադաշտերի մոտակայքում երեւալը վտանգավոր է կյանքի համար: Իսկ եթե երբեմն «Սպարտակ»-ԲԿՄԱ «հակամարտությունը» զուգադիպում է նաեւ օգոստոսի կեսերին Ռուսաստանում նշվող «դեսանտային» օրվան, կամ մոսկովյան «գրանտներից» մեկը հանդիպում է կովկասյան որեւէ թիմի հետ, ապա առհասարակ նույնիսկ մեքենայով խրախուսելի չէ դուրս գալը:

գություններ եղել են) ծայրահեղ ազգայնական տրամադրություններով երիտասարդներին ընդամենը պատրվակ էր պետք՝ հերթական անգամ «ցույց տալու կոնկրետ կովկասցիներին իրենց տեղը»: «Ես վստահ եմ, որ անկարգները որեւէ կապ չունեն սպորտի հետ եւ միայն իրականացրել են իրենց ինչ-ինչ քաղաքական ծրագրերը», ասել է Մոսկվայի ոստիկանության պետ **Վլադիմիր Կոլոկոլցեւը** ՌԴ ֆուտբոլային միության նախագահ Սերգեյ Ֆուրսենկոյի հետ հանդիպումից հետո: Իր հերթին Ֆուրսենկոն նշել է. «Առանց որեւէ կասկածի՝ սա ծայրահեղականների ձեռքի գործն է»:

Դեպքերին նման գնահատական է տվել նաեւ ՌԴ ներքին գործերի նախարար Ռաշիդ Նուրգալիեւը՝ խոստորեն դատապարտելով դրանք: Իսկ մայրաքաղաքի դատախազությունը, գլխավոր դատախազի տեղակալ **Ալեքսեյ Զախարովի** խոսքերով, Մանեժնայա հրապարակի դեպքերի կապակցությամբ հարուցել են 10 քրեական գործեր. «Կպատժվեն բոլոր նրանք, ովքեր բռնություններ են կիրառել հրապարակում կովկասցիների ու միջինասիացիների նկատմամբ», ասել է Զախարովը:

Մոսկովյան բոլոր թիմերի, հիմնականում՝ «Սպարտակի», «ֆանակումբների» ներկայացուցիչները չեն դադարում կրկնելուց, որ իրենք բռնություններ, այն էլ՝ ազգամիջյան, չեն հրահրել: «Երբ մենք հրապարակում լուռ սգում էինք երիտասարդ Սվիրիդովի մահը, ամեն ինչ ընթանում էր առանց ցնցումների: Ես ընդամենը կուզենայի, որ տարբեր կուսակցական երիտթեւեր չմիջամտեն մեր գործերին: Մենք, ընդհակառակը, կոչ ենք արել մեր երկրպագուներին չմասնակցել բռնություններին», ասել է «Սպարտակի» ջերմ երկրպագուներից հյուսիսկովկասցի Ամիր Խուսյուղանովը:

Գրեթե նույն բառերն ասել են «Սպարտակի» պաշտոնական ներկայացուցիչները՝ Մոսկվայի ոստիկանության եւ ՌԴ ֆուտբոլային միության ղեկավարների հետ հանդիպման ժամանակ: Ի դեպ, որոշ ռուս բլոգերներ Մանեժնայա հրապարակում «ամենաակտիվ» դերակատարմամբ ճանաչել են որոշ երիտասարդների՝ ռուսաստանյան «Նաշի», «Երիտասարդ Ռուսաստան», շարժումների ակտիվիստներին:

### «Բոլորին պատժելու ենք, չկասկածեք»

Դեպքերից հետո, որոնցից տուժել են հրապարակով անցնող սովորական, «ֆուտբոլի հետ ոչ մի կապ չունեցող բազմաթիվ կովկասցիներ», Կովկասում ամրապնդվելու քաղաքական կուրս վերցրած ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը իր բլոգում գրեց. «Մոսկվայում եւ ամբողջ երկրում ամեն ինչ կարգին է: Բոլոր սրիկաներին պատժելու ենք, բոլորին, չկասկածեք»:

ՄՈՍԿՎԱ

# Կովկասի հարցը՝ «Մանեժնայա» հրապարակում

***70-ամյա Վազգեն պապը Աբովյան քաղաքից «անհիշելի ժամանակներից» Մոսկվայի «Սպարտակ» ֆուտբոլային ակումբի համակիր է: Նույնիսկ ժամանակ կար, երբ ինքը մեկնում էր Մոսկվա՝ «Սպարտակի» կարեւորագույն խաղերին ականատես լինելու: Այժմ Վազգեն պապը հնարավորություն ունի հետեւելու սիրելի թիմին բացառապես հեռուստատեսությամբ, իսկ երբ հանդիպում են «Սպարտակն» ու «Դինամո» Կիեւը, Վազգեն պապի տունը վերածվում է իսկական «տնական» միջավայրի. նրա ընկերը՝ 67-ամյա Արկադին, «Դինամոյի» երկրպագուն է, եւ միասին են հետեւում «սովետական էլ-կլասիկոյին»:***

Անցած շաբաթ օրը Մոսկվայի Կրեմլին հարակից Մանեժնայա հրապարակում երիտասարդների բազմահազարանոց ամբոխը «խիստ ֆուտբոլային» «Ռուսներ, առաջ», «Ռուսաստանը՝ ռուսների համար», «Լուծենք կովկասյան հարցը» եւ այլ վանկարկումներով մեծամասշտաբ անկարգություններ է կազմակերպել: Ընդամենը մի քանի օր առաջ՝ դեկտեմբերի 6-ին, Հյուսիսային Կովկասից ինչ-որ երիտասարդներ, ինչպես իրենք են պնդում՝ ինքնապաշտպանությունից դրդված, կրակել եւ սպանել են «Սպարտակի» համակիր Եգոր Սվիրիդովին:

Ինչպես պնդում են որոշ ռուսական աղբյուրներ, սպանվել է մի ռուս ֆուտբոլասեր եւս, սակայն Մոսկվայի ոստիկանությունից պաշտոնապես հերքում են երկրորդ սպանվածի մասին տեղեկությունները: ՌԴ Հետաքննչական ծառայության ղեկավար Ալեքսանդր Բաստրիկինն արդեն իսկ հանդիպել է «Սպարտակի» երկրպագուների հետ: Սակայն, ինչպես ոստիկանությունում ու Ռուսաստանի ֆուտբոլային միությունում, այնպես էլ «Սպարտակ» Մոսկվա ֆուտբոլային ակումբում վստահ են, որ «նրանք, ովքեր անկարգություններ են իրականացրել Մանեժնայա հրապարակում, որեւէ կապ չունեն ֆուտբոլի հետ»:

Եթե այլ խոսքերով ասենք, ապա ՌԴ «երկու մայրաքաղաքներում» (Պետերբուրգում նույնպես անկարգություններ եղել են) ...

Մինչդեռ սոցիալական ցանցերը տեղեկացնում են, որ դեկտեմբերի 15-ին Մոսկվայում տեղի կունենա միանգամից երկու ցույց. մեկը՝ կրկին «ֆուտբոլասերների», մյուսը՝ կովկասցիների, որոնք Մոսկվայում՝ մանավանդ վերջին իրադարձություններից հետո, բողոքելու շատ պատճառներ ունեն: Այս տեղեկությունը, սակայն, մոսկովյան ոստիկանությունը հերքել է. «Ո՛չ երկրպագուները, ո՛չ էլ կովկասյան համայնքները բողոքի ակցիաներ չեն նախապատրաստում», նշել է ոստիկանության ներկայացուցիչ Վիկտոր Բիրյուկովը:

Մոսկովյան վերջին իրադարձությունները, ի դեպ, կարող են եւ հրահրված լինել, ինչպես ընդունված է ասել, «դրսի ուժերից». Ռուսաստանն օրեր առաջ շահեց իրավունքը՝ անցկացնելու իր մոտ 2018-ի աշխարհի առաջնությունը, իսկ նման միջադեպերը, մանավանդ դրանց շարունակական լինելը, բնականաբար, կարող են ստիպել ՖԻՖԱ-ին վերանայել որոշումը:

Այնուամենայնիվ ակնհայտ է, որ անցած շաբաթ Մանեժնայա հրապարակում ամենեւին էլ «ֆուտբոլ» չէին խաղում ու առհասարակ՝ արդեն վաղուց «Սպարտակի» կովկասցի երկրպագուների համար իրենց սիրելի թիմը ֆուտբոլ խաղում է բացառապես հեռուստացույցով. մարզադաշտում, հասկապես դրա սահմաններից դուրս նրանց «այնքան էլ չեն սպասում»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Ստոկհոլմի մահապարտ ահաբեկչի ինքնությունը հայտնի է

Ստոկհոլմի կենտրոնում շաբաթ օրը իրեն պայթեցրած ահաբեկչի անունն է Թիմուր Աբդուլ Վահաբ: Նրա անունը եւ լուսանկարը հրապարակվել են Shumukh al-Islam իսլամիստական կայքում:

Որեւէ խմբավորման անդամակցելու վերաբերյալ տեղեկություններ չկան: Հայտնի է, որ նա մի քանի տարի ապրել է Մեծ Բրիտանիայում: Վահաբի լուսանկարն ուղեկցվում է «շահիդ-մոջահեդ» եւ «եղբայր Շվեդիայում» բնութագրումներով:

Շվեդիայի անվտանգության SAPO ծառայության ղեկավար Անդերս Թորնբերգը Ֆրանսպրեսին տված հարցազրույցում ասել է, որ Ստոկհոլմում շաբաթ օրը 15 րոպեի տարբերությամբ տեղի ունեցած երկու պայթյունները թերեւս փոխկապակցված են, բայց գործի քննությունը դեռ ավարտված չէ:

SAPO-ի աշխատակիցները նաեւ փորձում են պարզել, թե շաբաթօրյա ահաբեկչությունն արդյոք առանձի՞ն ձեռնարկում էր, թե ահաբեկչությունների շարքի սկիզբն է միայն:

Սա փաստորեն առաջին ահաբեկչությունն է Շվեդիայի պատմության մեջ: Մայրաքաղաքի կենտրոնում՝ Թագուհու փողոցում նախ պայթել էր կայանված մի ավտոմեքենա, իսկ 15 րոպե անց նույն փողոցի մեկ ուրիշ մասում իրեն պայթեցրել էր մահապարտ ահաբեկիչը: Տեղական լրատվամիջոցների տվյալներով, նրա մարմնի վրա հայտնաբերվել է պայթուցիկ սարք, իսկ կողքին գտել են ուսապարկ՝ պայթուցիկներով եւ մեխերով:

Պայթյուններից երկու մարդ թեթեւ վիրավորվել է:

Հայտնի է, որ պայթյուններից առաջ SAPO-ում եւ շվեդական TT լրատվական գործակալության խմբագրությունում ստացվել էին «Շվեդիայի ժողովրդին» հասցեագրված սպառնալի հաղորդումներ, որոնցով պահանջվում էր դադարեցնել «հակաիսլամական պատերազմը»: Տեքստում հիշատակվում էին Աֆղանստանում Շվեդիայի ռազմական ներկայությունը եւ ծաղրանկարիչ Լարս Վիլկսի անունը, որին իսլամիստներն ատում են Մուհամմեդ մարգարեին ծաղրանկարելու համար:

ՖՐԱՆՍԻԱ

# Լը Պենի դուստրը մահմեդականներին համեմատել է օկուպանտների բանակի հետ

**Ֆրանսիայի ծայրահեղ աջ «Ազգային ճակատ» կուսակցության առաջնորդ Ժան-Մարի Լը Պենի դուստրը՝ Մարին Լը Պենը, խիստ քննադատության է արժանացել այն պատճառով, որ մզկիթների շուրջը ուրբաթօրյա աղոթքի հավաքված մահմեդական ամբոխներին համեմատել է նացիստ օկուպանտների հետ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**



**Հայտարարությունն արվել է Լիոնում «Ազգային ճակատի» հանրահավաքի ժամանակ: Կուսակցությունը հանդես է գալիս մահմեդականների լայնածավալ ներգաղթի դեմ:**

**«Ի պատասխան 2-րդ աշխարհամարտին եւ օկուպացմանը վերաբերող ելույթներին, մենք կարող ենք հիշեցնել ֆրանսիական քաղաքների փողոցներում նամազ անող մահմեդականների մասին, քանի որ դա մեր տարածքի զգալի մասի օկուպացիա է», հայտարարել է Մարին Լը Պենը, որը մտադիր է կուսակցապետ դառնալ ԱՃ նախագահի պաշտոնից հոր հեռանալուց հետո: Ապագա կուսակցապետի խոսքերով, «զավթումը տեղի է ունենում առանց զինվորների ու տանկերի, բայց դա օկուպացիա է, որի հետեւանքները ծանր բեռի պես ընկնում են տեղաբնակների ուսերի վրա»:**

**Ֆրանսիայում կառավարող «Ժողովրդական շարժման միություն» կուսակցությունը խստիվ քննադատել է Մարին Լը Պենի ելույթը: Քննադատությամբ հանդես են եկել նաեւ սոցիալիստները եւ «կանաչները»: Ֆրանսիայի մահմեդականների CFCM խորհուրդը Մարին Լը Պենի հայտարարությունն անվանել է «վիրավորական» եւ «հրահրիչ», իսկ «Ընդդեմ ռասիզմի եւ հանուն ժողովուրդների բարեկամության» շարժման մի խումբ իրավապաշտպաններ որոշել են քաղաքացիական հայցով դիմել դատարան:**

**41-ամյա Մարին Լը Պենը ներկայումս ԱՃ նախագահի տեղակալն է, իսկ նախագահ Ժան-Մարի Լը Պենը 2011-ի հունվարին թողնելու է պաշտոնը: Նա միաժամանակ Եվրոխորհրդարանի պատգամավոր է:**

**Ժան-Մարի Լը Պենի կարծիքով, Ֆրանսիան պարտավոր է առավել ակտիվ դեր խաղալ արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման մեջ որպես «իրոք չափավորական եւ չեզոք միջնորդ»: Մի առիթով հրեական «Սոխնուտ» գործակալությանը տված հարցազրույցում նա ասել էր, թե որեւէ վատ բան չի տեսնում «Համաս» արմատական խմբավորման իշխանության գլուխ անցնելու մեջ:**

# Facebook-ի հիմնադիրը իր ունեցվածքը կհատկացնի բարեգործությանը




**Facebook սոցիալական ցանցի հիմնադիր Մարկ Ցուկերբերգը որոշել է իր կարողությունը հատկացնել բարեգործությանը: Կազմակերպության կայքի պաշտոնական մամլո տեղեկագրում հաղորդվում է, որ Ցուկերբերգը միացել է հայտնի ֆինանսիստ Ուորեն Բաֆեթի եւ «Մայքրոսոֆթի» հիմնադիր Բիլ Գեյթսի The Giving Pledge նախաձեռնությանը:**

**«Ֆորբս» հանդեսը Ցուկերբերգի կարողությունը գնահատում է 6,9 մլրդ դոլար: Առայժմ չի հաղորդվում, թե Facebook-ի հիմնադիրն իր կապիտալի որ մասն է հատկացնելու բարեգործական միջոցառումներին:**

**Ցուկերբերգից բացի, անցյալ օրը The Giving Pledge նախաձեռնությանը միացել են 16 հարուստ ամերիկացիներ: Նրանց թվում են Yahoo! որոնողական համակարգի բաժնետեր, ֆինանսիստ Կառլ Իկանը եւ ներդնող Նիկոլաս Բերգգրյունը, որը 2010-ի կեսերին ձեռք բերեց գերմանական Karstadt հանրախանութների ցանցը:**

**Բաֆեթը եւ Գեյթսը The Giving Pledge-ը կազմակերպեցին 2010-ի հունիսին: Նրանք ամերիկացի միլիարդատերերին խնդրեցին բարեգործական նպատակներին հատկացնել իրենց ունեցվածքի առնվազն կեսը: Նրանք նշեցին, որ մտադիր չեն անձամբ բաշխել նվիրատվությունները եւ միայն ուզում են մեծահարուստ ամերիկացիներին համոզել հայտարարելու անձնական բարեսիրական մտադրությունների մասին: Օգոստոսին Բաֆեթին եւ Գեյթսին միացան 38 միլիոնատերեր, այդ թվում բեմադրիչ Ջորջ Լուկասը, Նյու Յորքի քաղաքագլուխ Մայքլ Բլումբերգը, CNN հեռուստաընկերության հիմնադիր Թեդ Թյորները, «Մայքրոսոֆթի» համահիմնադիր Պոլ Ալլենը եւ ուրիշներ:**

## Մշակույթ

# Նոր բեմադրութիւն մը եւս Նիւ Եորքի ԹՄՄ «Միհր Մկրտչեան» թատերախումբի խաղացանկին վրայ. «Շողոքորթը»

Օրերս Նիւ Եորքի Թէքէեան մշակութային միութեան «Միհր Մկրտչեան» թատերախումբը այս տարուան երկրորդ բեմադրութեամբ ներկայացաւ թատերասէր հասարակութեան` ներկայացնելով անմահանուն Յակոբ Պարոնեանի «Շողոքորթը» կատակերգութիւնը: Բեմադրութիւնը` Գագիկ Կարապետեանի, երաժշտութիւնը` Ստեփան Լուսիկեանի: Երգախառն այս ներկայացումը տեղի ունեցաւ Օրադէլի «Էլեմենթրի» վարժարանի հանդիսասրահին մէջ, լեցուն հանդիսականներու ներկայութեան:

Թատերախումբին վաստակաւոր դերասանները մասնակցեցան այս խաղին, որ նուիրուած էր բեմադրիչ ու դերասան Գրիգոր Սաթամեանի թատերական ծառայութեան 50-ամեակին: Նոյեմբեր 21-ի երեկոյեան մեծ շուքով Թէքէեանը նշեր էր անոր յիսնամեայ վաստակը Թենեֆլայի «Քլինթըն Ինն» պանդոկին մէջ («**Ազգ**»-ը գրել է այդ մասին: Խմբ.): Թատերախումբի յանձնախումբի հիմնադիր ատենապետը այս առթիւ հրատարակուած գրքոյկին մէջ կը գրէր. «Որքան ալ «Շողոքորթը» եւ հեղինակին միւս գործերը կը պատկերին 19–րդ դարու աւարտէն անցեալ դարու սկիզբի հայկական Պոլսոյ ընկերային ու ընտանեկան կեանքը, այսօր ալ անոր ստեղծագործութիւնները, մերօրեայ կեանքէն ներս, կը մնան նոյնքա՜ն հարազատ, նոյնքա՜ն այժմէական: Այսպիսով Յակոբ Պարոնեանի մեծութիւնը կը շարունակէ մնալ այսօր եւս»: Իրապէս ալ, հանդիսատեսը այս ներկայացմամբ տեսաւ այսօրուան պատկերը մեր ընկերային կեանքին` ի՛ր կեանքին:

Նոր դէմք չէ Գագիկ Կարապետեանը մեր թատերախումբէն ներս: Ան տեսաւ բոլոր ներկայացումները թատերախումբին ու գործակցեցաւ մեր բեմադրիչներուն հետ, սկսած` առաջինին` Թամար Յովհաննիսեանի հետ: Նոր ճաշակ մը կու գար աւելցնելու Գագիկը այս ներկայացմամբ, որ մեծապէս գնահատուեցաւ:

Պէ՛տք ենք անպայմանօրէն գրել դերասաններուն մասին. Յարութ Չաքմաքճեան Պապիկի (Շողոքորթի) դերով: Նոր Յարութ մը կարծես կը ներկայանար զինք սիրողներուն: Որքա՜ն ճկուն` այնքա՛ն պարտադրող անհատականութիւն մը բեմին վրայ, կրցաւ առանցքը դառնալ խաղի ընթացքին: Միսաք Պօղոսեան (Յովսէփի դերով): Ան եւս որպէս նոր Միսաք մը բարձրացաւ այդ գիշեր: Ան` հիմնադիրներէն այս թատերախումբին, կը շարունակէ մնալ մկրտչեանականներու վաստակաշատ դերասանը եւ իր ներկայութեամբ կը խրախուսէ երիտասարդ ուժերու մասնակցութիւնը մեր թատերախումբէն ներս: Թադէի դերով Շմաւոն Ադամեան, անգամ մը եւս եկաւ ապացուցանելու, որ իր օժտուածութեամբ արդէն սիրողական դերասանէ անդին... արհեստավարժ դերասան որպէս կը բարձրանայ բեմ: Մելինէ Խիկոյեան, Երեւանի Թատերական ինստիտուտէն շրջանաւարտ ու թատրոնի սէրը ստացած հայ բեմի մեծ վարպետէն` Հրաչեայ Ղափլանեանէն, կը մնայ թատերախումբին մնայուն ուժերէն, որ կրցաւ լաւագոյնս մարմնաւորել Թերեզայի դերը` Թադէի քոյրը: Դալար Զօքեան` Սոֆիի դերով (Յովսէփի դուստրը) անգամ մը եւս կու գայ ցոյց տալու իր բեմական շնորհները, եւ այս քանիերորդ անգամ ըլլալով: Դալար թատերախումբի երիտասարդ այն ուժերէն է, որ անպայմանօրէն պիտի մնայ պատնէշի վրայ:

Երկու ծառաները` Յարութ Թագւորեան (Բարթեմ) եւ Խաչիկ Սարըմինասեան (Գէորգ) թատերասէրներու ուշադրութիւնը հրաւիրեցին իրենց խաղարկութեամբ: Երկուքն ալ բնատուր ձիրքով արժանացան հանդիսատեսին ուշադրութեան:

Նոր ուժը, որ կու գայ միանալու թատերախումբին` Յարութ Պարունեանն է, Արշակի դերով: Հարստացաւ թատերախումբը Պարունեանով: Սպասելի է որ շուտով ան առաւել եւս ինքզինք դրսեւորէ յառաջիկայ ներկայացումներով: Բախտաւոր է «Միհր Մկրտչեան» թատերախումբը իր մէջ ունենալու Պարունեանը` շնորհալի այս երիտասարդը: Իսկ առաջին անգամ ըլլալով բեմ կը բարձրանար Միքայէլ Խիկոյեանը Տիգրանի դերով: Ամերիկածին` սակայն հայ բեմը սիրող նոր ուժ մը անկասկած:

Դիւրին չէ, անշուշտ, սիրողական թատերախումբի մը համար տալ երկու ներկայացում մէկ տարուան մէջ: Մկրտչեանականները, սակայն, գիտեն թատրոնի համար կատարել զոհողութիւն: Ահա՛ այդ ոգիով ալ թելադրուած` Նիւ Եորքի ու Նիւ Ջըրզիի թատերասէր հասարակութիւնը ներկայ գտնուեցաւ այս երկու օրերու ներկայացման: Թէքէեանի գործունէութիւնը այս մեծ ոստանի մէջ մնայուն գնահատողներու շարքին կը մնան ՄԱԿ-ի մօտ ՀՀ ներկայացուցիչ դեսպանը` պարոն Կարէն Նազարեանն ու տիկինը` Նանան, որոնք մի՛շտ ներկայ են ԹՄՄ-ի կազմակերպած ձեռնարկներուն:

Գնահատանքով արձանագրելու ենք բեմին ետեւը աշխատող տասնեակ մը տղոց ու աղջիկներու լուռ մասնակցութիւնը, ինչպէս նաեւ թատերական յանձնախումբի անդամներուն` գլխաւորութեամբ ատենապետին` Յակոբ Վարդիվառեանին: Ահա՛ 14րդ տարին ըլլալով 16րդ ներկայացումն է, որ կը հրամցնեն անոնք:

Մկրտչեանականներ այսպիսով արդարացուցած կ՚ըլլան իրենց անունը,. որ սերտօրէն կը մնայ կապուած Ֆրունզիկին` Միհր Մկրտչեանի անունան ու յիշատակին: Երանի՜ իրենց:

ՊԱՌՆԻ

# Հայերի առատ ներկայություն գերմանական համերգասրահների բեմերում

Համարյա ամեն օր տեղական մեծ ու փոքր լրատվամիջոցներում հանդիպում ենք հայ երաժիշտների անունների: Երբ անդրադարձը փոքր էր լինում, նոթատետրիս մեջ պահ էի տալիս միայն կատարողի անունը, հրապարակմանը սովորաբար չէի անդրադառնում: Այսուհետեւ «**Ազգում**», թեկուզ համառոտ, կհավաքենք այդ անունները:

Էլսֆլեթի սուրբ Նիկոլայ եկեղեցում դեկտեմբերի 3-ին, ժամը 19-ին տեղի ունեցավ դաշնամուրային մի առանձնահատուկ համերգ: Հայաստանում ծնված եւ այժմ Գերմանիայում բնակվող մենակատար Միհր Մկրտչյանն իր մեծ վարպետությունն արդեն բազմաթիվ համերգների ժամանակ է ապացուցել: Միհրի համերգային ծրագրում Բեթհովենի, Դեբյուսիի, Ռախմանինովի, Առնո Բաբաջանյանի եւ այլ կոմպոզիտորների ստեղծագործություններ էին, հաղորդում է NWZ online-ը:

«Մյունսթերլենդիշե ֆոլքսցայթունգը» փոխանցում է, թե Ծննդյան տոներին ընդառաջ` կիրակի, դեկտեմբերի 5-ին, Զենդենհորսթում երկու փայլուն արվեստագետների համերգն է տեղի ունեցել, որոնք հանդիսատես են կախարդում` միջազգային մրցույթների դափնեկիրներ 22-ամյա ջութակահարուհի Լիվ Միգդալ եւ 1985-ին Հայաստանում ծնված դաշնակահարուհի Լիլիթ Գրիգորյան: 2007-ի մարտից Լոնդոնում գործող The Keyboard Charitable Trust դաշնամուրային միջազգային հիմնադրամը աջակցում է Լիլիթին` 3 տարում դաշնամուրային 18 համերգ կազմակերպելով` Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, Իտալիայում: Դրանց կգումարվեն ելույթները Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաներում, ինչպես նաեւ եվրոպական տարբեր երկրներում: Կիրակնօրյա համերգին հնչել են Բախի, Մոցարտի, Բեթհովենի, Գրիգի եւ Ռավելի ստեղծագործություններից:

Ալթենբուրգ-Գերայի ֆիլհարմոնիկ նվագախմբի դեկտեմբերի 1, 2, 3-ի համերգը կարելի է անվանել յուրօրինակ ողջույն Հայաստանից, հրապարակում է գերմանալեզու ինտերնետային մեկ ուրիշ տեղական լրատվամիջոց: Նվագախումբը ղեկավարել է Հայլբրոնի Վյուրթեմբերգյան կամերային նվագախմբի գլխավոր դիրիժոր, 1971-ին Երեւանում ծնված Ռուբեն Ղազարյանը, մեկնաբանելով Խաչատրյանի «Սպարտակ» բալետի N1 սյուիտը, Շոստակովիչի N2 Ջազ սյուիտը, Բորոդինի N2 h-moll սիմֆոնիան, Խաչատրյանի «Գայանե» բալետից հատվածներ:

«Հայաստանը նոր աշխարհում էլ իր տանն է» նոյեմբերի 30-ին այս վերնագրով փոքրիկ հրապարակման մեջ «Ֆրանկֆուրտեր նոյե փրեսսե»-ն հիացմունքով գրում է նոյեմբերի 28-ին Ֆրանկֆուրտի Ալթե օփերում Գերմանիայի ամենամեծ տրանսպորտային ակումբի` ADAC-ի` Ծննդյան տոների առիթով կազմակերպված համերգի մասին, որին մասնակցել է Հայաստանի ֆիլհարմոնիկը` դիրիժոր Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ: Երկու անգամ էլ` թե կեսօրից առաջ, թե երեկոյան, համերգի տոմսերը լավ սպառվել էին: Երիտասարդ մենակատար կլառնետահար Սաբինե Գրոֆմայերի մեկնաբանությունն ունկնդրելուց հետո բնական հարց է ծագում` ինչո՞ւ է այսքան հազվադեպ կատարվում Կարլ Մարիա ֆոն Վեբերի նվագախմբի համար գրված ստեղծագործությունը: Օրվա նվագախումբը Հայաստանից էր եկել, գրում է թերթը ու բացատրում` կովկասյան այդ երկիրը երաժշտական է համարվում.Հերբերտ ֆոն Կարայանն է այնտեղ ընտանեկան արմատներ ունեցել: (Հնաբնակ գերմանահայերը հիշում են, թե տեղական ռադիոն մի անգամ պատմել է հանրահայտ դիրիժորի հայկական ծագման մասին: Մեզ տակավին չի հաջողվել վերոբերյալ հրապարակումից բացի Կարայանի հայկական ծագման մասին որեւէ տող գտնել-Ան. Հ.)*: Թոփչյանի չափավորության զգացումով ղեկավարած Հայաստանի ֆիլհարմոնիկը Բորոդինի «Պոլովեցյան պարեր» ստեղծագործության հենց սկզբից հոգացել էր, որ Մեծ դահլիճում հետաքրքրություն արթնանա: Իսկ Դվորժակի «Նոր աշխարհից» 9-րդ սիմֆոնիան իր կոչմանը վայել բարձունքի եւ վերջակետի հասավ` հրաժեշտի հնարավորություն տալով երաժիշտներին:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

***)Ընդհակառակն, Փարիզի «Յառաջ» օրաթերթի 80-ական թ.թ.-ի համարներից մեկում կա Վիեննայի Մխիթարյանի հայրերից մեկի վկայությունն այն մասին, որ Հերբերտ ֆոն Կարայանը, պատասխանելով իր հայկական ծագման մասին հարցմանը, ասել է` «դժբախտաբար` ոչ»: Ծ. Խ.:**

## ՆՈՐ ԳԻՐՔ

# Հայեցի կերպար` վսեմ հատկանիշներով

Ամերիկայի Լոս Անջելես քաղաքում 2010 թվականին տպագրվել է **Վահե Գաբուչյանի** հուշերի գիրքը` «Մի հայրենադարձի աշխատանքային գործունեությունը» խորագրով: Հեղինակը գիրքը նվիրել է իր ծնողների` Միքայելի եւ Արտեմիսի հիշատակին, որոնք Արեւմտյան Հայաստանի Սեբաստիա քաղաքից էին եւ 1917-ին հազիվ փրկվել էին ցեղասպանության արհավիրքներից ու հանգրվանել Եգիպտոսում: Հայրը




միջնակարգ կրթությունն ստացել էր Սեբաստիայի Արամյան ազգային վարժարանում, եղել ապագա մեծանուն բանաստեղծ Դանիել Վարուժանի ընկերն ու համադասարանցին: Վահե Գաբուչյանը հետագայում, երբ միասին աշխատում էինք Հայաստանի բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունում, հարմար առիթներով վերհիշում ու պատմում էր հոր` Միքայելի հիշողությունները Դանիել Վարուժանի աշակերտական տարիների մասին, պատմում էր հուզմունքով:

Նշեմ նաեւ, որ գրախոսվող հատորը հրատարակվել է իրավաբաններ Վարդգես եւ Ռիտա Եղիայանների մեկենասությամբ:

Վահե Գաբուչյանը ծնվել է 1930 թ. օգոստոսի 28-ին Կահիրեում: Սովորել եւ ավարտել է Կահիրեի Նուբարյան ազգային վարժարանը, ուսումը շարունակել Կահիրեի Ամերիկյան համալսարանի Լինկոլն քոլեջում: Գրքում Վահե Գաբուչյանը մանրամասնորեն ներկայացնում է իր եւ հարազատների կյանքը Կահիրեում: Հոգսերի, դժվարությունների հաղթահարում, ինքնության, ազգային ինքնագիտակցության պահպանում, կարոտ Հայաստան երկրի նկատմամբ:

1948-ին Գաբուչյանները ընտանյոք հանդերձ շատ սփյուռքահայերի հետ միասին ներգաղթում են Հայաստան, ուր դիմագրավում են այն դժվարությունները, որոնք այդ տարիներին բաժին հասան շատ ներգաղթողների:

Բայց Վահե Գաբուչյանը, ուսումը զուգորդելով աշխատանքի հետ, գերազանցության դիպլոմով ավարտեց Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության բաժինը, հետո ավարտեց նաեւ ասպիրանտուրան եւ նույն համալսարանում անցավ դասախոսական աշխատանքի: Ռեկտոր, արժանահիշատակ Նագուշ Հարությունյանի օրոք Գաբուչյանը նշանակվեց Երեւանի մայր բուհի պրոռեկտոր: Գրքում մանրամասնություններ կան Վ. Գաբուչյանի` այդ տարիներին գիտամանկավարժական եւ դասախոսական գործունեության մասին:

Հուշագրության մեջ սիրո ջերմ տողեր կան ընտանիքի, տիկնոջ` Մարգարիտ Մամուլյանի, որդիներ Վարուժանի, Վիգենի, հարսների ու թոռների մասին: Իսկ ընտանիքը շատ բան է ասում Վահե Գաբուչյանի կերպարի մասին, նրա ծնողների մասին: Զարմանալի սիրով միաբանված ընտանիք, հայասեր, հայրենասեր, հայեցի, իսկական հայկական ընտանիք:

1962 թ. Վահե Գաբուչյանը աշխատանքի է անցնում ՀԽՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունում: Սկզբում նա զբաղեցնում է գիտության եւ հրատարակչության բաժնի վարիչի, ապա բուհերի վարչության պետի պաշտոնները` լիովին դրսեւորելով իր գիտական, կազմակերպչական կարողությունները ու հմտությունները: Հետո աշխատում է որպես նախարարի տեղակալ, այնուհետեւ` առաջին տեղակալ: Այդպիսի աստիճանական բարձրացումը պատահական չէր. հաշվի էին առնում Վ. Գաբուչյանի փորձը, հիմնավոր գիտելիքները, կազմակերպչական շնորհները, մի քանի լեզուների (հայերենի մաքուր իմացությունը, արաբերենին, անգլերենին եւ այլ լեզուներին տիրապետելը) իմացությունը, մարդկային հատկանիշները եւ այլն: Հիրավի, Վ. Գաբուչյանը կիրթ ու շնորհալի մտավորականի տիպար է, ընդգծվող հայասեր մտավորականի:

Եվ այսպես` Վահե Գաբուչյանին բախտ է վիճակվում աշխատել անվանի գիտնականների, պետական նշանավոր գործիչներ, նախարարներ Գեւորգ Հայրյանի, Աշոտ Ասլանյանի, Լյուդվիգ Ղարիբջանյանի հետ: Վ. Գաբուչյանը իր գրքում փաստարկված, ստույգ իրողություններով ներկայացնում է ՀԽՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության եւ իր բազմաբովանդակ գործունեությունը` 1960-1980-ական թվականներին:

Այն, ինչի մասին տրամաբանված ու գիտական-մանկավարժական սկզբունքներով նկարագրում է Վ. Գաբուչյանը, իրական է ու հույժ վավերական: Եվ 28 տարի անընդմեջ Վահե Գաբուչյանն աշխատել է հիշյալ նախարարությունում ու խոր հետագիծ թողել բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության ճանապարհին:

Տողերիս հեղինակը 1978 թ. հունվարից մինչեւ 1988 թ. հոկտեմբերը գլխավորել է Հայաստանի բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական կրթության նախարարության միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների վարչության պետի աշխատանքները` անմիջական ղեկավարներ ունենալով Վահե Գաբուչյանին, Լյուդվիգ Ղարիբջանյանին, որոնք գիշեր ու զօր անում էին ամեն ինչ` մասնագիտական կրթության որակը բարելավելու, բարձրորակ մասնագետներ պատրաստելու համար: Եվ այդ գործի հիմնական ու արդյունավետ դերակատարներից մեկը Վահե Գաբուչյանն էր` իր արդյունարար աշխատանքով եւ կազմակերպչական շնորհքով:

ՀԲԸՄ վարչության հրավերով Վ. Գաբուչյանը 1990 թ. աշխատանքի է անցել Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունում որպես տնօրեն, հետո ազատվել: Գրքում հիմնավոր անդրադարձ կա Մելգոնյան կրթական հաստատությունում աշխատած տարիների եւ կատարած աշխատանքների մասին:

Այժմ որդիների ընտանիքների հետ միասին Վահե Գաբուչյանն ապրում է ԱՄՆ-ում: Վահե Գաբուչյանին կարոտն ու սերը հաճախ բերում են Հայաստան...

Գրախոսվող գրքում, որ գրված է ներշնչանքով, խոսքի գուներանգներով ու պատկերավորությամբ, հիմնականում ներկայացված է Վահե Գաբուչյանի աշխատանքային գործունեությունը: Կան նաեւ կենսագրական բնույթ կրող առանձին դրվագներ, տարբեր մարդկանց հետ ունեցած փոխհարաբերությունների պատկերներ, որոնք գրեթե ամբողջական են դարձնում մի շնորհալի սփյուռքահայի անչափ ուսանելի կերպարը` մարդկային ու քաղաքացիական դիմանկարով, ազգասիրական-հայրենասիրական հատկանիշներով:

Վահե Գաբուչյանի «Մի հայրենադարձի աշխատանքային գործունեությունը» վերտառությամբ աշխատությունը ուսանելի շատ դասեր կարող է պարգեւել գիտությամբ ու կրթությամբ զբաղվող մարդկանց:

ՌՈՄԱ ՂԱԼԱՔՅԱՆ

# Ավետիք Գրիգորյան. «Մտադիր չեմ կյանքի մյուս հաճույքներից ինձ զրկել»

***Ինչպես տեղեկացրել ենք, շախմատի Հայաստանի այս տարվա չեմպիոն Ավետիք Գրիգորյանը մասնակցելու է Բուլղարիայի Բանսկո քաղաքում կայանալիք մրցաշարին: Մեկնարկից առաջ Chess-news.ru կայքէջի թղթակից Հրաչ Ջանիկյանը հարցազրույց է ունեցել Ավետիքի հետ, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:***

**- Ավիկ, կխնդրեի պատմել շախմատային առաջին քայլերիդ մասին:**

- Ասում են, որ ինձ շախմատ խաղալ է սովորեցրել տատիկս: Ղարաբաղում պատերազմ էր, եւ մասնագիտությամբ բժիշկ հայրս կամավոր մեկնել էր Արցախ: Շատ շուտ սովորեցի քայլերն ու սկսեցի տատիկիս հաղթել: Երբ Արցախից հայրս վերադարձավ, սկսեցի նրա հետ խաղալ: Սկզբում նա խաղում էր առանց թագուհու եւ երկու նավակի: Ես պարտվում էի նրան: Ինձ խոստացավ բիլիարդ նվիրել, եթե կարողանամ 3 անգամ իրեն հաղթել: Դա ինձ հաջողվեց, այնպես որ շախմատում իմ առաջին պարգեւը բիլիարդն էր:

Հետո շախմատի դպրոց հաճախեցի, 7,5 տարեկանում արդեն 1-ին կարգային էի: Մի պահ թողեցի շախմատը ու գրեթե մեկ տարի կարատեով զբաղվեցի: Սակայն 12 տարեկանում վերադարձա իմ սիրած զբաղմունքին, Արսեն Եղիազարյանի գլխավորությամբ մարզվեցի, որը ինձ շատ օգնեց վարպետությունս կատարելագործելու: 2002-ին, երբ բացվեց շախմատի ակադեմիան, տեղափոխվեցի այնտեղ, 2006-ից սկսեցի մարզվել Զավեն Անդրեասյանի հետ: 2004, 2006 եւ 2007-ին դարձա Հայաստանի պատանիների չեմպիոն: 2007-ին, երբ արդեն միջազգային վարպետ էի, ինձ շատ օգնեց Արթուր Չիբուխչյանը:

**- Շատերի համար անսպասելի էր Հայաստանի մեծահասակների չեմպիոնի տիտղոսի նվաճումը, քանի որ մասնակիցների մեջ վարկանիշով դու միայն 6-րդն էիր:**

- Մինչ առաջնության մեկնարկը մասնակցել էի մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությանը: Շատ լուրջ էի նախապատրաստվել մրցաշարին, սակայն չհաջողվեց չեմպիոն հռչակվել: Այդ աշխատանքն օգնեց Հայաստանի առաջնությունում հաջող խաղալուն: 2009-ից սկսել էի մարզվել Վլադիմիր Հակոբյանի մոտ, որի ներդրումը մեծ է իմ հաջողություններում: Ընդ որում, ես Հայաստանի առաջնությանը չպետք է մասնակցեի: Սակայն վերջին պահին Աշոտ Անաստասյանը հրաժարվեց մասնակցությունից:

**- Ըստ մրցակարգի, Հայաստանի չեմպիոնը դառնում է երկրի հավաքականի 5-րդ խաղացողը: Ոմանք գտնում են, որ դա ազգային հավաքականում ընդգրկվելու չափազանց խիստ կարգ է:**

- Քանի որ առաջին 4-ն ընտրվում են վարկանիշով, կարծում եմ՝ 5-րդի ընտրության կարգն օբյեկտիվ է:

**- Այս տարի հավաքականի կազմում մասնակցեցիր համաշխարհային օլիմպիադային: Այս անգամ կրկնակի չեմպիոնները միայն 7-րդ տեղը զբաղեցրին: Ո՞րն էր անհաջողության պատճառը:**

- Կարծում եմ, որ ինչպես հավաքականը, այնպես էլ առանձին շախմատիստը մշտապես չի կարող հաղթել: Իմ կարծիքով, այս տարի մեր թիմը լավ մարզավիճակում չէր:

**- Ինչպե՞ս ես վերաբերվում կայծակնային խաղին:**

- Կարծում եմ, որ չափի մեջ այն



օգտակար է, քանի որ սկսում ես արագ մտածել: Հաճախ եմ բլից խաղում, սակայն չափից ավելին կարող է վնասել:

**- Քո խաղաոճը համաշխարհային շախմատի դասականներից ո՞ւմ ոճի հետ կարելի է համեմատել:**

- Դժվարանում եմ պատասխանել: Հիշում եմ, որ կարողանում էի գուշակել Կորչնոյի քայլերը:

**- Աշխարհի չեմպիոններից ո՞ւմ խաղն է քո վրա առավել մեծ տպավորություն թողել:**

- Գուցե Անատոլի Կարպովի: Նրա գիրքը մեծ հետաքրքրությամբ էի կարդում եւ մի փոքր տխրեցի, երբ ավարտեցի:

**- Ներկայումս ո՞վ է քո մարզիչը:**

- Ցավոք, Արթուր Չիբուխչյանը ներկայումս Իրանում է: Հիմնականում աշխատում եմ Զավեն Անդրեասյանի եւ Վլադիմիր Հակոբյանի հետ:

**- Ազատ ժամանակդ ինչպե՞ս ես անցկացնում:**

- Ձգտում եմ ակտիվ հանգստի. լողավազան եմ հաճախում, ֆուտբոլ, թենիս եմ խաղում, ֆիլմ եմ դիտում, հանդիպում եմ ընկերներիս հետ:

**- Գիտեմ, որ զբաղվում ես յոգայով:**

- Յոգան մտապես հետաքրքրել է ինձ: Վերջերս տեղեկացա, որ Անանդն էլ է յոգայով զբաղվել, եւ դա նրան շատ է օգնել: Սովորել եմ վերականգնել ուժերս եւ կենտրոնանալ: Ճիշտ է, յոգայով զբաղվելուց հետո առայժմ ոչ մի մրցաշարի չեմ մասնակցել: Բուլղարիայում կայանալիք մրցաշարը ցույց կտա, թե իմ մեջ ինչն է փոփոխվել:

**- Պարտությունն ինչպե՞ս ես ընդունում:**

- Առաջին պահին ինձ չափազանց վատ եմ զգում, աշխատում եմ զսպել, որպեսզի ավելորդություններ թույլ չտամ: Ավելի երիտասարդ տարիքում ցավագին էի ընդունում պարտությունը: Այժմ հասկանում եմ, որ առանց պարտության շախմատում հնարավոր չէ: Փորձում եմ վերլուծել սխալներս եւ հնարավորինս շուտ մոռանալ պարտությունը: Ընկերներիս հետ շփումը նման դեպքերում հանգստացնում է:

**- Մի փոքր անդրադառնանք հայ պատանի շախմատիստներին, մասնավորապես Սամվել Տեր-Սահակյանին, որն այս տարի աշխարհի եւ Եվրոպայի պատանեկան առաջնություններում արծաթե մեդալներ նվաճեց:**

- Հայաստանում շատ տաղանդավոր պատանի շախմատիստների սերունդ է աճում: Վերջերս Հայաստանի պատանեկան հավաքականը Թուրքիայում գերազանց ոճով համաշխարհային պատանեկան օլիմպիադայի չեմպիոն հռչակվեց: Իսկ Տեր-Սահակյանը, բացի լավ շախմատիստ լինելուց, նաեւ հիանալի անձնավորություն է: Կարծում եմ, նրան լավ ապագա է սպասում:

**- Ներկայումս ուշադրության կենտրոնում հաջորդ տարի կայանալիք հավակնորդների մրցաշարն է: Ինչպե՞ս ես գնահատում Լեւոն Արոնյանի հաղթելու հնարավորությունները:**

- Անկասկած, Լեւոնն աշխարհի ուժեղագույն շախմատիստներից մեկն է: Ներկայումս նա լավ մարզավիճակում է: Կարծում եմ, նա հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկն է: Հուսով եմ, որ նրա հաղթական երթը Կազանում կշարունակվի:

**- Ինչպիսի՞ն էր տարին հայկական շախմատի համար:**

- Հավաքականի համար այնքան էլ հաջող չէր, սակայն առանձին շախմատիստներ մեծ հաջողությունների հասան:

**- Հնարավո՞ր է, որ երբեւէ փոխես մասնագիտությունդ:**

- Ոչ, շախմատն իմ հիմնական մասնագիտությունն է, եւ փոխելու մտադրություն չունեմ: Սակայն դա չի նշանակում, թե մտադիր եմ կյանքի մյուս հաճույքներից ինձ զրկել:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

# Դարչինյանը դժգոհ է մրցավարությունից



**Թեթեւագույնքաշային կարգի 4 ուժեղագույն բռնցքամարտիկների մասնակցությամբ մրցաշարի առաջին մենամարտն անհաջող դասավորվեց Վախթանգ Դարչինյանի համար: 34-ամյա Վախթանգին չհաջողվեց հաղթել 25-ամյա մեքսիկացի Աբներ Մարեսին ու մտնել եզրափակիչ: Բավական համառ ու գրեթե հավասար մրցապայքարում մրցավարներից երկուսը հաղթանակը շնորհեցին Մարեսին (115-111, 115-112), իսկ 3-րդի կարծիքով հաղթանակին արժանի էր Դարչինյանը (115-111):**

**Վախթանգն իր մարտաոճին հարազատ մնալով, առաջին իսկ ռաունդներից ակտիվ գործողությունների անցավ եւ արդեն 2-րդ ռաունդում մրցակցին նոկդաունի ենթարկեց: Շուտով մեքսիկացի բռնցքամարտիկը վնասվածք ստացավ ու թվում էր, թե նրա համար դժվար կլինի շարունակել մենամարտը: Սակայն ի պատիվ նրա, Մարեսը ոչ միայն դիմացավ մինչեւ մրցամարտի ավարտը, այլեւ վերջին ռաունդներում բավական ակտիվ մարտ վարեց, ինչն էլ ի վերջո վճռեց մրցակցության ելքը: Մարեսն այս անգամ էլ ռինգից հեռացավ անպարտելի՝ տոնելով 21-րդ հաղթանակը: Իսկ ահա Դարչինյանը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 39 մենամարտերում 3-րդ պարտությունը կրեց: Վախթանգ Դարչինյանը մենամարտից հետո իր դժգոհությունն է արտահայտել հանդիպման մրցավարությունից. «Դա պարզապես զզվելի էր: Բնականաբար, այս մենամարտում ես հաղթեցի: Իմ առավելությունը մրցակցի նկատմամբ 3-4 ռաունդներով ավելի էր: Մրցավարը թույլ չէր տալիս ինձ հանգիստ մենամարտել, անընդհատ բղավում էր՝ մի խախտիր, մի խախտիր: Ես չէի հրում մրցակցիս: Նման մրցավարության մարզական կարիերայում դեռ չէի հանդիպել»:**

**«Մենք այնպիսի մարտավարություն էինք ընտրել, որ կստիպեր մրցակցին նահանջել: Լավ էինք հասկանում, որ Դարչինյանը սիրում է գրոհել: Նա հուժկու հարվածների է տիրապետում, եւ ես ապացուցեցի, որ կարող եմ դիմագրավել նրան: Մշտապես նեղում էին նրան եւ ամեն մի հարվածից հետո լսում էի նրա տնքոցները: Դա շատ ծանր ու դժվարին մենամարտ էր, ամենածանրն իմ կարիերայում», նշել է Մարեսը:**

**Այսպիսով, Վախթանգ Դարչինյանը ստիպված կլինի պայքարել 3-րդ տեղի համար: Հաջորդ տարվա մարտին կայանալիք մենամարտում նրա մրցակիցը կլինի 31-ամյա կոլումբիացի Յոնի Պերեսը, որը նույն երեկոյի ընթացքում միավորներով (111-117, 112-116, 113-115) պարտվեց Ժոզեֆ Ագբեկոյին: Վերջինս նաեւ իրեն վերադարձրեց IBF-ի վարկածով թեթեւագույնքաշային կարգի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Ագբեկոն եզրափակիչում կմրցի Աբներ Մարեսի հետ:**

# Սարգիս Հովսեփյանն ՈւԵՖԱ-ից մրցանակ կստանա



**Պրահայում կայացած ՈւԵՖԱ-ի գործկոմի նիստում մի շարք որոշումներ են կայացվել, որոնցից մեկն էլ վերաբերում է ազգային հավաքականների կազմում 100 եւ ավելի խաղ անցկացրած ֆուտբոլիստների համար հատուկ մրցանակ սահմանելուն: Այդ մրցանակով պարգեւատրվելու են ինչպես 100-րդ խաղն անցկացնող ֆուտբոլիստները, այնպես էլ նախկինում 100-ի սահմանագիծը հատածները: Նրանց թվում է Հայաստանի ազգային հավաքականի ավագ Սարգիս Հովսեփյանը, որը 117 խաղ է անցկացրել:**

**Հեթ տրիկ ծրագրի շրջանակներում 2012-2016-ին ՈւԵՖԱ-ի անդամ երկրներից յուրաքանչյուրը 3 մլն եվրոյի ֆինանսական օգնություն կստանա: Բացի այդ, ամեն տարի ազգային ֆեդերացիաները 1,5 մլն եվրոյի համերաշխության վճար կստանան: Այսպիսով, 4 տարում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան 9 մլն եվրո կստանա, ինչը 15 տոկոսով գերազանցում է նախորդ վճարումները: Կանանց ֆուտբոլի զարգացման համար տարեկան 100 հազար եվրո կհատկացվի ՀՖՖ-ին:**

**Գործկոմը հավանություն է տվել չեմպիոնների լիգայի եւ Եվրոպայի լիգայի հանդիպումները լրացուցիչ մրցավարների ներգրավմամբ սպասարկելու պրակտիկային եւ որոշել է այդ փորձը կիրառել նաեւ Եվրո-2012-ի եզրափակիչ փուլում:**

# Հայաստանը կներկայացնի «Միկան»

Armsport.am-ի տեղեկացմամբ, հունվարին Սանկտ Պետերբուրգում կայանալիք ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» մրցաշարում Հայաստանից հանդես կգա «Միկան»: Ինչպես հայտնի է, «Միկան» 19-րդ առաջնությունում 4-րդ տեղն է զբաղեցրել: Սակայն առաջնության մրցանակակիրներ «Փյունիկը», «Բանանցն» ու «Ուլիսը» հրաժարվել էին մեկնել Սանկտ Պետերբուրգ եւ մրցաշարին մասնակցելու իրավունք էր ստացել «Միկան», որի ղեկավարությունը նպատակահարմար գտավ ներկայացնելու Հայաստանը:

# Կոստենյուկը վայր դրեց չեմպիոնի լիազորությունները

**Շախմատի աշխարհի կանանց առաջնությունում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի մասնակիցները: Պայքարից դուրս մնաց աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Ալեքսանդրա Կոստենյուկը, որը 1,5-2,5 հաշվով զիջեց Ռուան Լուֆեյին: Հաջող է հանդես գալիս Էլմիրա Սկրիպչենկո-Աղաբաբյանը, որը լրացուցիչ մրցախաղում 4-2 հաշվով պարտության մատնեց Վիկտորյա Չմիլիտեին: Հետաքրքրական է, որ Էլմիրան իր բոլոր մրցակցուհիներին հաղթել է լրացուցիչ մրցախաղում:**

**Հաջող են խաղում Չինաստանի ներկայացուցիչները, որոնցից 4-ը շարունակում են պայքարը: Հոու Յիֆանը պարտության մատնեց իր հայրենակցուհուն (2,5-1,5): Ժաո Սյուեն առավելության հասավ Ելենա Դեմբոյի նկատմամբ (1,5-0,5), Ցզյու Վենցզյունն էլ հաղթեց Աննա Մուզիչուկին (1,5-0,5):**

**Պայքարը շարունակում են նաեւ հնդիկ 2 շախմատիստուհիները՝ Հարիկա Դրոնավալին ու մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշ (2600) ունեցող Համպի Կոներուն: Դրոնավալին 4-3 հաշվով պարտության մատնեց Մարիա Մուզիչուկին, իսկ Կոներուն առավելության հասավ Աննա Զատոնսկիխի նկատմամբ (1,5-0,5): Ուկրաինուհի Կատերինա Լահնոն 1,5-0,5 հաշվով հաղթեց չինացի Հուան Ցյանին:**

**Այսպիսով, պայքարը շարունակող 8 շախմատիստուհիներից 6-ը Ասիայի ներկայացուցիչներ են: Քառորդ եզրափակիչում կհանդիպեն հետեւյալ զույգերը. Լուֆեյ-Դրոնավալի, Սյուե-Սկրիպչենկո, Կոներու-Վենցզյուն, Լահնո-Յիֆան:**

# Մրցաշարում եռիշխանություն է

Լոնդոնում ընթացող շախմատի մրցաշարի 5-րդ տուրից հետո եռիշխանություն է հաստատվել: 9-ական միավորով աղյուսակը գլխավորում են Մագնուս Կարլսենը, Վիշվանաթան Անանդը եւ Լյուկ Մակշեյնը:

Անանդը 3-րդ տուրում անդրանիկ հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Կարլսենի նկատմամբ: 4-րդ տուրում աշխարհի չեմպիոնը մատ հայտարարեց անգլիացի Նայջել Շորթի արքային: Սա մրցաշարում արդեն 2-րդ նման դեպքն է: Մինչ այդ 1-ին տուրում Ադամսն էր մատ հայտարարել Հաուելին: 5-րդ տուրում Անանդը հաշտություն կնքեց Մակշեյնի հետ:

Կարլսենը Անանդին զիջելուց հետո 2 անընդմեջ հաղթանակ տոնեց Նակամուրայի եւ Հաուելի նկատմամբ: Լյուկ Մակշեյնը, որ մեկնարկում 2 անընդմեջ հաղթանակ էր տոնել, հաջորդ երեք պարտիաներում հաշտություն կնքեց Կրամնիկի, Ադամսի եւ Անանդի հետ: 8-ական միավորով 4-5-րդ տեղերն են բաժանում Նակամուրան եւ Կրամնիկը: Ադամսն ունի 6 միավոր:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Հերթական ապօրինի հողահատկացումը, հերթական հատված ծառերը

Սարկավագի 72 շենքի 350 քմ տարածք կազմող այգուց գրեթե ոչինչ չի մնացել: Շուրջ 150 պտղատու ծառերը եւ մոշի թփերը մի քանի օր առաջ կտրել են, այգին կառուցապատել ու պատրաստվում են շենքի դիմաց սուպերմարկետ կառուցելու:

«90-ականներին, երբ ամբողջ հանրապետությունում ծառ էին կտրում, մենք ծառ էինք տնկում, հերթապահում էինք, որ այդ ծառերը չկտրվեին: Եթե դուք հարուստ եք, ուժ ունեք, գնացե՛ք ուրիշ տեղ հող գնեք, ինչո՞ւ եք գալիս մեր պուրակը քանդում, մեր ծառերը կտրում», ասում է շենքի բնակիչ Իգիթ Քերոբյանը:

Մեկ տարի առաջ Երեւանի նախկին քաղաքապետ Երվանդ Զախարյանը այգին օտարել է ու տարածքը տրամադրել Ռուբեն Հարությունյանին: Մինչդեռ բազմաբնակարան շենքերի դիմացի այգիները, պուրակները համայնքային սեփականություն են եւ վաճառքի ենթակա չեն:

Փաստորեն քաղաքապետարանը ապօրինի հողահատկացում է արել, նախ սեփականաշնորհել է տարածքը, այնուհետեւ վաճառել:

«Օրենքը խախտել է պետությունը, մեկ տարի առաջ Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը հողահատկացման դիմումը է ստորագրել, բայց այդ այգին նրան չի պատկանում: Այդ այգին ժողովրդինն է՝ Քանաքեռի բնակչությանը», ասում է բնակիչ Հովհաննես Հախնազարյանը:

Գարնանը քաղաքապետարանի կանաչապատման բաժնի աշխատողները պտղատու ծառերի արմատներին սալյարկա ու թթու են լցրել:

«Ծառերը սեւացել էին: Ի՞նչ է, կարգը փոխվե՞լ է, հիմա ծառերն էտելու համար թթու են օգտագործում: Ինչպես կարելի է գարնանը ծառերի արմատներին թթու լցնել», զայրանում է Ռ. Քերոբյանը:

Ծառերը «էտելուց» հետո բնակիչները դիմեցին նախագահին, վարչապետին, ԱԺ նախագահին, քաղաքապետարանին, սակայն բոլոր կառույցները հղում էին անում նախկին քաղաքապետի ստորագրած փաստաթղթին եւ ավելացնում, որ ամեն ինչ ըստ օրենքի է ընթանում: Եվ առավոտյան մի խումբ մարդիկ եկել են ու սկսել այգու ծառերը կտրել:

Շենքի շուրջ 500 բնակիչ կրկին դիմել են նախագահին, վարչապետին, քաղաքապետարանին, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, սակայն պատասխանը մեկն էր. օրենքով այգին պատկանում է Ռուբեն Հարությունյանին:

Մի քանի օր առաջ շենքի բնակիչներին ընդունել է քաղաքապետարանի ապօրինի շինարարությունների բաժնի վարիչը:

«Ծանոթանալով գործի մանրամասներին՝ խոստացավ խնդիրը լուծել, սակայն երկրորդ հանդիպման ժամանակ դեմքն այլայլված էր: Ասաց՝ այս գործում չկամ, տեսեք՝ ինչ եք անում», պատմում է շենքի բնակչուհի Պադմիրա Եղիկյանը:

Համայնքը ներկայացնող ԲՀԿ պատգամավոր Աշոտ Տոնոյանն էլ առաջարկել է բնակչությանը գնալ «կոմպրոմիսի» ու ոչինչ չձեռնարկել:

«Բայց մերժեցինք, որովհետեւ դա բնակչության այգին է, այստեղ մեր երեխաներն են խաղում: Շենքի տարեցներն այստեղ են հանգստանում», պատմում է Իգիթ Քերոբյանը:

Բնակիչներին ընդունած Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանն էլ տղամարդու խոսք է տվել, որ հարցը կհարթվի:

«Պետության ներկայացուցիչը տղամարդու խոսք է տալիս, կարծես տղայական կռիվ է: Բայց ո՞ւր է այդ խոսքը: Ոչ մի կողմից կանաչ տարածք չունենք: Շրջակա բետոնի կույտի մեջ սա միակ կանաչ տարածքն է, որտեղ կարելի է հանգստանալ: Ե՞րբ են այդ գրպանավորները հասկանալու, որ ամեն ինչ չի գնվում: Մենք մեր բակն ենք պահանջում», ասում է Պ. Եղկյանը:

Շենքի բնակիչները հավաստիացնում են, որ կդիմեն դատարան, եթե այգու կարգավիճակը չփոխվի: «Վերջապես պետք է հասկանան, որ զոռբայությամբ ոչինչ չի որոշվելու, պետք է հասկանան, որ երկրում պետք է շարժվել օրենքներով», ասում է Քերոբյան Իգիթը:

Ապօրինի հողահատկացման հերթական դեպքն էլ Գայի արձանի հարեւանությամբ էր: Երբեմնի գեղեցիկ պուրակից այսօր ոչինչ չի մնացել: Քաղաքապետարանը այն օտարել է եւ վաճառել: Ծառերն ու թփերը կտրելուց հետո այժմ այգին վերածվել է մեծ շինհրապարակի, որտեղ ամենայն հավանականությամբ հերթական էլիտար խանութը կամ սրճարանը կկառուցեն:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԴԵՊԻ ԳԵՐՄԱՆԻԱ

# Էմմին փոշմանել է ու մեկնում է «Եվրոտեսիլ»



**Արդեն երկրորդ տարին է՝ Հայաստանում «Եվրոտեսիլին» մասնակցելու առնչությամբ հնչում է երգչուհի Էմմիի անունը: Անցյալ տարի մինչեւ վերջին պահը Օսլո մեկնող Էմմին կես ճանապարհից հետ ուղարկվեց, եւ Հայաստանը «Եվրոտեսիլում» ներկայացրեց անհայտ երգչուհի Եվա Ռիվասը, ում աստղը մարեց, եւ նրա մասին մոռացան հենց «Եվրոտեսիլ» մրցույթ-փառատոնի հաջորդ օրը:**

**«Եվրոտեսիլի» նախընտրական փուլից հետո Էմմին «Ազգի» հետ զրույցում ասաց, որ Հանրային հեռուստառադիոխորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանը խոստացել է, որ Էմմին ու Միհրանն են մեկնելու Նորվեգիա:**

**«Մինչեւ վերջին պահը մեզ հավաստիացնում էին, որ խոսակցությունները որեւէ հիմք չունեն, եւ «Եվրոտեսիլ» մենք ենք մեկնելու», ասել էր Էմմին:**

**Իր հերթին երգչուհու մայրը եւ պրոդյուսերը՝ Նադեժդա Սարգսյանը, հայտարարել է, որ Էմմիի հետ անարդար են վարվել, նա վիրավորված է եւ այլեւս երբեք չի ներկայացնի Հայաստանը միջազգային ասպարեզում:**

**Բայց ինչպես երեւում է՝ երգչուհու վիրավորվածությունն անցել է, կամ էլ «Եվրոտեսիլի» բեմում հայտնվելու երգչուհու մի քանի տարվա երազանքն այնքան ուժեղ էր, որ նա համաձայնեց այս տարի Գերմանիայում ներկայացնել Հայաստանը:**

**Ինչ վերաբերում է Հանրային հեռուստառադիոխորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանի հետ հարաբերություններին, ապա Էմմին հայտարարեց. «Մենք բարիշել ենք»:**

Հ. Հ.

# ԱՄՆ-ում էներգետիկ ըմպելիքները հանվում են վաճառքից

**Ալկոհոլ եւ կոֆեին պարունակող էներգետիկ ըմպելիքները, որոնք հայտնի են «ալկո-պոպս» անունով, ԱՄՆ-ում հանվում են վաճառքից: Այդ մասին հաղորդում է BBC գործակալությունը:**

**Այսպես կոչված թույլ ալկոհոլային կոկտեյլների սպառողները հիմնականում երիտասարդներ են: Երկրի սանիտարական վերահսկողության վարչությունը որպես դրանց արգելման պատճառ նշում է նման խմիչքի օգտագործումից հետո գիտակցության կորստի դեպքերի հաճախացումը:**

**Ընդգծվում է, որ նման կոկտեյլի մեջ ալկոհոլը կրկնակի շատ է գարեջրի համեմատությամբ: Կրկնակի շատ է նաեւ կոֆեինը մի մեծ գավաթ սուրճի համեմատությամբ:**


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ Ֆինանսական համակարգի քաղաքականության եւ ֆինանսական կայունության վարչության Ֆինանսական համակարգի վերլուծությունների բաժնի «**վերլուծաբան**» թափուր աշխատատեղի համալրման համար:

**Աշխատանքի նպատակն է.** ՀՀ ֆինանսական համակարգի գործունեության ու զարգացման ուղղությունների վերլուծություն եւ գնահատում, զարգացման խոչընդոտների բացահայտում, տնտեսության ֆինանսական կայունության գնահատմանն ուղղված վերլուծությունների իրականացում, ռիսկերի գնահատման նոր մոտեցումների մշակում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Թեմատիկ եւ պարբերական վերլուծությունների իրականացում՝ ուղղված ֆինանսական համակարգի կազմակերպությունների գործունեությանը՝ հիմք ընդունելով կազմակերպություններից ստացվող պարբերական հաշվետվությունները եւ հարցումների արդյունքում ստացված տվյալները:

Վերլուծական եւ տեղեկատվական պարբերական տեղեկանքների եւ հաշվետվությունների պատրաստում, ինչպես հրապարակման, այնպես էլ ՀՀ ԿԲ ներքին օգտագործման համար:

Վերլուծական մոտեցումների եւ ռիսկերի գնահատման հետ կապված միջազգային փորձի ուսումնասիրություն:

Ֆինանսական համակարգի կազմակերպությունների ռազմավարական ծրագրերի վերլուծություն:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.**

*Բարձրագույն* տնտեսագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում:

*Բարձրագույն ոչ մասնագիտական* կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում:

*Գիտելիքներ հետեւյալ ոլորտներում*՝ բանկային գործ (խորացված), ֆինանսներ եւ ֆինանսական վերլուծություն (խորացված), ֆինանսական հատվածի օրենսդրություն եւ նորմատիվային դաշտ (խորացված), ապահովագրություն եւ արժեթղթերի շուկա (խորացված), ռիսկերի կառավարում (խորացված), հաշվապահական հաշվառում (միջանկյալ), մակրոտնտեսագիտություն (միջանկյալ), վիճակագրության հիմունքներ (միջանկյալ):

*Լեզուների իմացություն*՝ հայերենի, ռուսերենի եւ անգլերենի ազատ տիրապետում:

*Անհրաժեշտ հմտություններ*՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office, տվյալների շտեմարանների հետ աշխատելու ունակություն):

**Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝** 2010թ. դեկտեմբերի 27-ը:

**Աշխատավարձը՝** 220 600 դրամ (չհարկված):

**Պահանջվող փաստաթղթերը.**

դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www.cba.am «Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում): Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով: Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

Հասարակայնության հետ կապերի ծառայություն



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է արտաքին մրցույթ՝ Ֆինանսական համակարգի քաղաքականության եւ ֆինանսական կայունության վարչության Ֆինանսական համակարգի զարգացման բաժնի «**հետազոտող**» թափուր աշխատատեղի համալրման համար:

**Աշխատանքի նպատակն է.** ՀՀ ֆինանսական համակարգում առկա հիմնախնդիրների հետազոտում, ֆինանսական համակարգի զարգացումներից բխող ռիսկերի եւ հնարավորությունների գնահատման եւ կառավարման մոտեցումների կատարելագործում: Համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

**Աշխատատեղի հիմնական պարտականություններն են.**

Ֆինանսական համակարգի զարգացման միջազգային փորձի եւ միտումների ուսումնասիրում, ֆինանսական համակարգի զարգացման նպատակով ինստիտուցիոնալ նոր տարրերի (հարաբերություններ, գործիքներ, մեթոդներ, մոդելներ, մոտեցումներ) ներդրում եւ դրանց հետ կապված նախագծերի մշակման ու կառավարման աշխատանքներին աջակցում;

Նոր ինստիտուտների եւ գործիքների կարգավորման/նորմատիվային դաշտի շարունակական կատարելագործում:

**Պահանջվող կրթությունը եւ գիտելիքների շրջանակը.**

*բարձրագույն* տնտեսագիտական կրթության պարագայում՝ 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում,

*բարձրագույն ոչ մասնագիտական* կրթության պարագայում՝ 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ Կենտրոնական բանկում կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ոչ Կենտրոնական բանկում,

*գիտելիքներ հետեւյալ ոլորտներում*՝ ֆինանսական համակարգ (խորացված), ֆինանսական հատվածի օրենսդրություն եւ նորմատիվային դաշտ (խորացված), մակրոտնտեսագիտություն (միջանկյալ), ֆինանսներ (միջանկյալ), նախագծերի կառավարում (միջանկյալ):

*Լեզուների իմացություն*՝ հայերենի, ռուսերենի եւ անգլերենի ազատ տիրապետում:

*Անհրաժեշտ հմտություններ*՝ համակարգչով աշխատելու հմտություն (MS Office):

**Փաստաթղթերի ընդունելության վերջնաժամկետը՝** 2010թ. դեկտեմբերի 27-ը:

**Աշխատավարձը՝** 220 600 դրամ (չհարկված):

**Պահանջվող փաստաթղթերը.**

դիմումի ձեւ (ձեւը զետեղված է ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում - www.cba.am «Թափուր աշխատատեղեր» բաժնում, կամ տրվում է ՀՀ կենտրոնական բանկում): Դիմումի ձեւը կարող է ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ hrm@cba.am հասցեով: Մրցութային հարցաշարը եւ Կենտրոնական բանկում մրցույթների անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է Կենտրոնական բանկի էլեկտրոնային կայքում (www.cba.am) կամ տրվում է Կենտրոնական բանկում: Պարզաբանումների համար կարող եք զանգահարել՝ 59-26-34 եւ 26-13 (ներքին):

Հասարակայնության հետ կապերի ծառայություն


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա Ն 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝13.12.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: